

ՄԵՐ ԱՆԿԻԻՆԵՆ

Մտահոգիչ Նշանակում Մը

Ամերիկայի նորընտիր նախագահ՝ Տանուտ Թրամփ այս օրերուն զբաղած է նոր վարչակարգի իր անձնակազմը ամբողջացնելու աշխատանքով:

Թրամփի առաջին նշանակումներն մին հանդիսացաւ Ազգային Ապահովութեան գծով խորհրդակցանի պաշտօնին վրայ Մայքըլ Ֆլիննի նշանակումը:

Անցեալ Նոյեմբեր 8-ին, այն պահուն երբ Ամերիկացի ժողովուրդը կ'ուղղուէր քուէտուտի, ընտրելու համար իր նոր նախագահը, Գոնկրէտի հարցերուն նուիրուած «The Hill» թերթի կայքէջին վրայ լոյս տեսաւ Մայքըլ Ֆլիննի յօդուածը, ի պաշտպանութիւն Թրամփի ու անոր նախագահ Ռաճէփ Էրտողանին:

Յօդուածագիրը նախ կը մեղադրէր Ամերիկեան մամուլը, որ շատ անարդար ու խիստ կը գտնուի յուլիսեան զինուորական յեղաշրջումի ծախող փորձէն ետք, Էրտողանի վարած ներքին քաղաքականութեան նկատմամբ: Ապա, շարունակելով ան կը գրէ, «Մենք պէտք է սկսինք անդրադառնալ, որ Թրամփի խիստ կարեւոր է Միացեալ Նահանգներու շահերու տեսանկյունէն: Մենք պէտք է վերատեսուք եւ Եմբարկեմք մեր արտաքին քաղաքականութիւնը եւ ընդունինք Թրամփի որպէս նախապայման: Մենք ՊԷՏԶ Է ԱՇՆԱՐԳԻՆ ՆԱՅԻՆՔ ԹՈՒՐԹԻՈՅ ՏԵՍԱՆԿԻՆԵՆ»:

Հայութեան համար խիստ մտահոգիչ այս տողերը անկատար պիտի մնային, եթէ նախագահական ընտրութեան արդիւնքը տարբեր ըլլար: Սակայն, այժմ որ Ազգային Ապահովութեան խորհրդակցանին կը պատկանին այս տեսակետները, անոնք կ'ստանան շատ աւելի մեծ կարեւորութիւն:

Ինչպէս ծանօթ է, Տանուտ Թրամփ չունի արտաքին քաղաքական փորձառութիւն եւ ամբողջութեամբ պիտի ապաւինի իր Ազգային Ապահովութեան խորհրդակցանին վրայ: Մայքըլ Ֆլինն այսուհետեւ մնայուն ներկայութիւն պիտի դառնայ ոչ միայն Սպիտակ Տունէն ներս, այլ նաեւ նախագահի գրասենեակէն ներս, ձեւաւորելու համար Ամերիկայի արտաքին քաղաքականութիւնը՝ աշխարհի տաք կետերուն, ներառեալ Լեռնային Ղարաբաղի հարցին, վերաբերեալ:

Մայքըլ Ֆլիննի պաշտպանած տեսակետները ու նաեւ այն հանգամանքը, որ իրեն պատկանող ընկերութիւնը լոպիստական աշխատանքներ կը տանի ի նպաստ Թրամփի, ոչ միայն շահերու խիստ բախում կը յառաջացնէ զուտ ամերիկեան առուսնով, այլ նաեւ զգուշ հետեւելու պարտաւորութեան տակ կը դնէ մեզ՝ Հայաստանէն սկսեալ մինչեւ Ամերիկահայութիւնը:

«ՄԱՍԻՍ»

Կարէն Կարապետեան՝ Հայաստանը Խոր Փոփոխութիւններու Կարիք Ունի

Հայաստանը խոր փոփոխութիւններու կարիք ունի ու «մենք առաջարկում ենք ամենարագ փոփոխութիւնները, որքանով հնարաւոր է»: Այս մասին Bloomberg գործակալութեան ըսած է ՀՀ վարչապետ Կարէն Կարապետեանը:

Մասնաւորապէս Կարապետեան նշած է կաշառակերութեան դէմ պայքարին ուղղուած միջոցառումները՝ պաշտօնակալութիւնը պարզեցնելու ու ձեռներեցութեան պետական աջակցութիւն ցուցաբերելու հաշուին:

Կարապետեան շեշտած է, որ մաքսային ծառայութեան ղեկավարութեան ու հարկային օրէնագրքին մէջ եղած փոփոխութիւնները կը նպաստեն թափանցիկութեան բարձրացման:

Կարապետեանը նշած է, որ մտադիր է ստեղծել խորհրդատուական խումբ, որ կը ներառէ նաեւ օտարերկրացի մասնագէտներ՝ երկարաժամկէտ հեռանկարով տնտեսութեան զարգացման հնարաւորութիւններ որոնելու համար:

Վարչապետի կարծիքով, յա-



ՀՀ վարչապետ Կարէն Կարապետեան

ջորդ տարուան 3.2 տոկոսի տնտեսական աճը՝ Հայաստանի 5.8 միլիարդ տոլարի չափով արտաքին պարտքի հետ միասին բաւարար չեն բնակչութեան կենսամակարդակը զգալիօրէն բարձրացնելու համար: «Մեր արտաքին պարտքը աւելի արագ է աճում, քան ՀՆԱ-ն ու աւելի արագ, քան եկամուտները», - նկատած է վարչապետ Կարէն Կարապետեան:

Ս.Գ. Հնչակեան Կուսակցութեան Հանդիպումը Արցախի Փոխ-Վարչապետ Արթուր Աղաբէկեանի Հետ



ՍԳԿ-ի պատուիրակութիւնը Արցախի փոխ վարչապետ Արթուր Աղաբէկեանի հետ

Հարաւային Գալիֆորնիա կը գտնուի Արցախի փոխ վարչապետ Արթուր Աղաբէկեան, Հայաստանի Համահայկական Հիմնադրամի տեղական վարչութեան հրահրող: Այս առիթով Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնը ներկայացնող պատուիրակութիւն մը, Նոյեմբերի 19-ին 2016, հանդիպում մը ունեցաւ Արցախի հանրապետութեան փոխ վարչապետին հետ, Կլենտէյլի «Հիլթոն» պանդոկին մէջ: Պատուիրակութեան մաս կը կազմէին Գաբրիէլ Մոլոյեան, Սուրէն Խուտանեան, Տօթթ. Արշակ Գազանճեան եւ Վահէ Աջապահեան: Սոյն հանդիպման ներկայ էին

նաեւ Արցախի Թեմի առաջնորդ Գերշ. Պարգեւ Արքեպս. Մարտիրոսեան, Ուշահինկթընի մօտ Արցախի մնայուն ներկայացուցիչ Ռուբերթ Աւետիսեան եւ Հայաստանի Հանրապետութեան Լոս Անճելոսի փոխ հիւպատոս Ռազմիկ Ստեփանեան:

Տեսակցութեան սկիզբը փոխ վարչապետը ներկաները ողջունելէ ետք, հանգամանաօրէն անդրադարձաւ չորսօրեայ պատերազմին առիթով Արցախի ժողովուրդի եւ պաշտպանութեան բանակի մարտունակութեան ու քաջարի կեցուածքի մասին, որուն նպատակն է

Թրքական Լոպիսթը Նշանակուեցաւ Թրամփի Ազգային Ապահովութեան Խորհրդական



Ազգային Ապահովութեան խորհրդական Մայքըլ Ֆլինն

Միացեալ Նահանգներու ընտրեալ նախագահ Տանուտ Թրամփ լծուած է նոր կառավարութեան անդամներու եւ Սպիտակ Տան բարձրաստիճան պաշտօնեաներու նշանակումները ամբողջացնելու աշխատանքին:

Առաջին նշանակումներու շարքին էր, Ազգային Ապահովութեան խորհրդականի խիստ կարեւոր պաշտօնը Սպիտակ Տունէն ներս: Այս պարտականութիւնը վստահեցաւ փոխ գործադիր Մայքըլ Ֆլիննին, որ Տանուտ Թրամփի թեկնածութեան առաջին պաշտպաններէն մին հանդիսացած էր:

Մայքըլ Ֆլինն նախագահ Պարաք Օպամայի օրով կը վարէր Պաշտպանական Հետախուզութեան Գործակալութեան տնօրէնի պաշտօնը՝ մինչեւ 2014 թուականը, երբ ան պաշտօնէ հեռացուեցաւ իր ծայրայեղ հակումներուն պատճառաւ:

Մայքըլ Ֆլիննի նշանակումը Ամերիկեան մամուլի մօտ յառաջացուց մտահոգութիւն, նկատելով անոր կապերը Թուրքիոյ եւ Ռուսաստանի հետ:

The Daily Caller կը տեղեկացնէ որ, Մայքըլ Ֆլիննի կողմէ հիմնուած, հետախուզական խորհրդատուական ընկերութիւնը վերջերս որպէս լոպիսթ վարձուած էր հոլանտական կազմակերպութեան մը կողմէ, որ մօտ կապեր ունի թրքական կառավարութեան եւ նախագահ Ռաճէփ Էրտողանի հետ: Իսկ The Intercept կը գրէ որ, Ֆլիննի ընկերութիւնը՝ Flynn Intel Group-ը տասնեակ հազարաւոր տոլարներ ստացած է թուրք գործարար Քամիլ Էքիմ Ալիթէքինէն, իրեն պատկանող մէկ ընկերութեան, միջազգային հարցերու շուրջ վերլուծութիւններ պատրաստելու համար:

The Intercept կ'աւելցնէ որ, Մայքըլ Ֆլիննին պատկանող ընկերութիւնը օրէնքի համաձայն, Գոնկրէտի մօտ արձանագրուած է, որպէս լոպիսթական կազմակերպութիւն:

Ո՞ւմ է Ուզում Փրկել Կարէն Կարապետեանը

ՄԱՐԿ ՆՇԱՆԵԱՆ

Բաւականին գրագէտ կազմակերպուած փի-առփի արդիւնքում այսօր հասարակութեան որոշակի հատուածը նոր կառավարութեան ու վարչապետի գործունէութիւնը գնահատում է մօտաւորապէս այսպէս. տարիներ շարունակ կիսագրագէտ պաշտօնեաներն ու օլիգարխները թալանում էին երկիրը, իսկ հիմա յայտնուել է «խելքը գլխին, աշխարհ տեսած, նորմալ կրթութիւն ստացած» մի պաշտօնեայ ու փորձու է շտկել իրավիճակը:

Եթէ հարցը դիտարկենք պաշտօնեաների անձնական որակների հարթութեան մէջ՝ սրանում գուցէ եւ ճշմարտութեան հատիկ կայ, բայց արդեօ՞ք կարելի է հարցը պաշտօնեաների անձնական որակների հարթութեան մէջ դիտարկել: Պարզ ասած՝ արդեօ՞ք տարիներ շարունակ «առանձին անհատներն» են թալանել երկիրն ու միլիարդներ դիգել, թէ՞ այնուամենայնիւ լաւ մշակուած համակարգ է գործել:

Բանն այն է, որ «առանձին անհատները» երկիրը թալանում էին ե՛ւ խորհրդային տարիներին, ե՛ւ անկախութեան առաջին տարիներին, բայց այդ ամէնը համակարգուած բնոյթ է ստացել Ռո-

րը, եւ վերջ:

Եկամտի չափորդ լուրջ աղբիւրը գազն էր: Պէտք էր ընդամէնը այնպէս անել, որ Ռուսաստանից ստացուի էժան գազ, ուղիղ կրկնակի թանկ վաճառուի սպառողներին, ընդ որում՝ Ռուսաստանին վճարուի ոչ թէ «քայլ փող», այլ գոյք: Այդ խնդիրը նոյնպէս լուծուեց, ու «կեանքը վայելելու» համար իշխանութիւններին մնում էր միայն մի «մանրուք»՝ այնպէս անել, որ յանկարծ իշխանափոխութիւն տեղի չունենայ: Բայց եթէ փողը կայ՝ դա պրոբլեմ է: Ոստիկանութիւն, յատուկ ծառայութիւններ, «յաճախորդ» կուսակցութիւններ, թաղային հեղինակութիւններ, գինուած բանդաներ, ընտրակեղծիքներ իրականացնող շրջիկ խմբեր եւ այլն, ու հարցը լուծուեց: Մեանիգմն աշխատում էր (ու մինչեւ հիմա էլ աշխատում է) համեմատաբար անխափան՝ երկիրը դարձել է մի մեծ հանքավայր ու փող է բերում, դրսից գումարները գալիս են, մենաշնորհները գերշահույթներ են ապահովում, ընտրութիւնների միջոցով իշխանափոխութիւն իրականացնելու շանսերն էլ գործնականում գրոյական են: Միակ պրոբլեմն այն է, որ ժողովրդի համբերութեան բաժա-

Մոսկուան Լախապատերազմական Ռեժիմ է Ազդարարում

ԹԱՍԱՐ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Սերժ Սարգսեանը հարցազրոյց է տուել «Ռուսաստանն Այսօր» միջազգային լրատուական գործակալութեան ղեկավար Դմիտրի Կիսելիովին, որտեղ նա յայտարարել է, որ հանդէս է եկել Երեւանի եւ Պաքուի միջեւ «թէժ գծի» ստեղծման օգտին, ինչը թոյլ կը տայ օպերատիւ արձագանքել Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցող զարգացումներին: «Կարելի է, եթէ դա օգուտ տայ, եթէ մենք օպերատիւ արձագանքենք իրադարձութիւններին: Ենթադրենք՝ շփման գծում ինչ-որ մէկը կրակում է, եւ մեր տուեալներով՝ կրակողները ատրպէյճանցիներն են, եւ վերցնում են հեռախօսը, գանգում են Ատրպէյճանի նախագահին եւ ասում են՝ «կրակում են»: Եւ նա իսկապէս ստուգում է», - պարզաբանել է Սարգսեանը՝ յաւելելով. «Ես պատրաստ էի վերահսկողութիւն սահմանել եւ յստակ ասել՝ մերոնք կրակում են, թէ չեն կրակում, իհարկէ՝ ակնկալելով նոյնպիսի վերաբերմունք նաեւ Ատրպէյճանի ղեկավարի կողմից»:

Այնուհետեւ Սերժ Սարգսեանը յիշեցրել է, որ 1990-ականներին նման «թէժ գիծ» բացելու փորձ արուել է: «Նման փորձ մեզ մօտ արուել է 1990-ականների սկզբին, այդ ժամանակ ես Հայաստանի պաշտպանութեան նախարարն էի, մենք ուղիղ կապ ունէինք Ատրպէյճանի պաշտպանութեան նախարարութեան հետ: Նման էքստրեմալ իրավիճակներում, երբ արտահերթ կապի կարիք էր լինում, մենք կարող էինք կապուել: Բայց այժմ նման բան չկայ», - մեկնաբանել է նա:

Հետաքրքիր է, թէ ինչու է Ռուսական քարոզամեքենայի կարկառուն դէմքի՝ Կիսելիովի օգնութեամբ Ռուսաստանը նման թեմա է մտցնում շրջանառութեան մէջ: Երեւանի ու Պաքուի միջեւ «թէժ գծի» ստեղծման գաղափարի մէջ, թերեւս, ոչ մի վատ բան չկայ, աւելին, եթէ սահմանում իրավիճակը լարուած է, իսկ դա այդպէս է արդէն վաղուց, նոյնիսկ նման անհրաժեշտութիւն էլ կայ:

Սակայն խնդրի «նրբութիւնը» կայանում է նրանում, որ Ռուսաստանով նման հարցի բարձրացումը որոշ ենթատեքստեր է պարունակում: Նախ՝ Մոսկուան ցանկանում է արձանագրել, որ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ գրեթէ պատերազմական, կամ՝ նախապատերազմական իրավիճակ է:

Յաջորդը՝ «թէժ գծի» գործարկումը կարող է կայանալ Մոսկուայի «ղաբարոյով», իսկ սա իր հերթին նաեւ նշանակում է, որ Երեւանն ու Պաքուն իրենց պարտաւորուած են զգալու սահմանային իրավիճակի պայմանները քննարկել նաեւ Մոսկուայի հետ: Այսինքն՝ եթէ այս գաղափարը կեանքի կոչուի, կը ստեղծուի մի իւրօրինակ եռանկիւնի Երեւանի, Բաքուի եւ Մոսկուայի միջեւ:

Այս ամէնի համատեքստում կարելի է նաեւ այլ եզրակացութիւն անել. փաստօրէն Մոսկուան առաւելապէս կեդրոնացած է դարաբաղանի թէժ-սահմանային իրավիճակի պահպանման վրայ, քան թէ միջնորդների կողմից ներկայացուած առաջարկները կեանքի կոչելու ուղղութեամբ Ալի-

եւին համոզելու:

Այսինքն, Մոսկուան չի հաւատում խաղաղ բանակցութիւններով իրավիճակը հանդարտեցնելու հնարաւորութեանը, ինչին որպէս միջնորդ պարտաւոր է ձգտել ու հասնել: Օրինակ՝ ինչո՞ւ Մոսկուան սահմանային միջադէպերի հետաքննութեան մեխանիզմների ներդրման ու Անշէյ Կասպրչիկի առաքելութեան անձնակազմի մեծացման գաղափարի ուղղութեամբ նոյնպիսի հետեւողականութիւն չի ցուցաբերում:

Մինչդեռ ակնյայտ է, որ գոնէ Միացեալ Նահանգներն այս առաջարկների իրագործումը հետեւողականօրէն շարունակում են պահանջել կողմերից, աւելի ձիշտ՝ կոնկրետ Պաքուից:

Ասուածի վառ ապացոյց կարելի է համարել երէկ ամերիկացի բարձրաստիճան պաշտօնեայի յայտարարութիւնը Երեւանում: Սերժ Սարգսեանն ընդունել է տարածաշրջանային այցով Հայաստան ժամանած Ամերիկայի Միացեալ Նահանգների պետքարտուղարի Եւրոպայի եւ Եւրասիայի հարցերով փոխտեղակալ Բրիջիթ Բրինքին: Նախագահականի պաշտօնական հարցազրույցից համաձայն՝ Բրիջիթ Բրինքը վստահեցրել է, որ Միացեալ Նահանգների նոր վարչակազմը շարունակելու է հետաքրքրուած լինել Հարաւային Կովկասի տարածաշրջանի զարգացումներով, շարունակելու է նաեւ յանձնառու լինել ԼՂ հիմնախնդրի կարգաւորման նպատակով վստահութեան միջոցների մարապնդման ուղղութեամբ ձեռքբերուած վերջին պայմանաւորուածութիւնների իրագործմանը: «ՀԱՅԵԼԻ»

Հասարակութեան որոշակի հատուածը նոր կառավարութեան ու վարչապետի գործունէութիւնը գնահատում է մօտաւորապէս այսպէս. տարիներ շարունակ կիսագրագէտ պաշտօնեաներն ու օլիգարխները թալանում էին երկիրը, իսկ հիմա յայտնուել է «խելքը գլխին, աշխարհ տեսած, նորմալ կրթութիւն ստացած» մի պաշտօնեայ ու փորձու է շտկել իրավիճակը

բերտ Քոչարեանի օրօք: «Գաղափարը» մօտաւորապէս սա էր: Քանի որ Հայաստան մտնող փողը (իսկ «փող» ասելով իշխանութիւնները միայն տարագրումը նկատի ունէին) երկու աղբիւր ունի՝ հանքարդիւնաբերութիւնն ու դրսից ուղարկուող տրանսֆերտները, պէտք էր երկու հարց լուծել: Առաջին՝ արագ «իրենցով անել» բոլոր հիմնական հանքավայրերը, եւ երկրորդ՝ մենաշնորհներ սահմանել ներկրուող հիմնական ապրանքատեսակների վրայ, որպէզի դրսից փող ստացող ՀՀ քաղաքացիներն այդ փողը ոչ թէ «պատահական մարդկանց» տան, այլ իրենց նշանակած մոնոպոլիստներին:

Քոչարեանն ու Սերժ Սարգսեանը մի քանի տարիների ընթացքում երկու խնդիրներն էլ յաջողութեամբ լուծեցին, ու արդէն կարելի էր մտածել «հասոյթն» աւելացնելու մասին: Լաւագոյն տարբերակը հայկական դրամն արժեւորելն էր, որովհետեւ դա կտրուկ կ'աւելացնէր ներկրողների շահույթները: Կհ նախագահ Տիգրան Սարգսեանը փայլուն կերպով լուծեց նաեւ այս հարցը՝ մի քանի տարիների ընթացքում երկու անգամ արժեւորեց դրամը, իսկ «օպերացիայի» համար անհրաժեշտ կանխիկ տոլարի հարցը լուծեց ամենապարզ ձեւով՝ վաճառեց ոսկու պաշարներ-

կը լցւում է, ու նոր պատերազմի վտանգն էլ աւելի ու աւելի իրական է դառնում:

Հիմա խնդիրը հետեւեալն է՝ «փրկիչ» Կարէն Կարապետեանը մօտ 15 տարի շարունակ յաջողութեամբ գործող այս համակարգի ձեւաւորմանը մասնակցե՞լ է, թէ՞ կապ չի ունեցել դրա հետ: Թարսի պէս՝ ոչ միայն մասնակցել է, այլեւ առանցքային դերակատարում է ունեցել: Եթէ «նեղ կուզուի» (ասենք՝ 10-15 հոգով) որեւէ լուրջ հարց են քննարկել, այդ 10-15-ից մէկն ինքն է եղել: Պարզապէս այնքան խելք է ունեցել, որ իրեն միւսներինց աւելի համեստ է պահել, ջիպերի շարափունով չի շրջել, թիկնապահների բանակ չի ունեցել եւ այլն: Իր համար «գլուխը կախ» մուլտիմիլիոնատէր է դարձել՝ երեւի հոգու խորքում վստահ լինելով, որ վաղ թէ ուշ իր այդ կերպարը պէտք կը գայ համակարգին: Եւ պատկերացրէք՝ չի սխալուել: Համակարգը պրոբլեմների առջեւ է յայտնուել, ու նա եկել է փրկելու նրանց, ում հետ տարիներ շարունակ 10-15 հոգով որոշումներ էին ընդունում, թէ ինչպէս աւելի արդիւնաւէտ թալանեն երկիրը:

Իսկ հասարակութեան մէջ դեռ կան մարդիկ, ովքեր կարծում են, թէ նա եկել է իրենց փրկելու: «ԶՈՐՐՈՐԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր միտքերը

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՏԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՅԵԱՉՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«ՀՀ-ն Մեկ Ղեկավարի Կուսակցություն է Եւ Այդ Ղեկավարը Սերժ Սարգսեանն է»

Հանրապետական կուսակցութեան (ՀՀԿ) գործող նախագահ Սերժ Սարգսեանը, ըստ իշխող կուսակցութեան խօսնակ, Ազգային ժողովի փոխնախագահ Էտուարտ Շարմազանովի, պիտի վերընտրուի ՀՀԿ նախագահ:

«Կարծում եմ, որ Դուք լուսնից չէք իջել, որ մտածեք այլ բան: Եւ կուսակցութեան շարքերի պահանջն է դա եւ ցանկութիւնը: Մենք հպարտ ենք, որ մենք Հայաստանի Հանրապետական կուսակցութեան ներկայացուցիչներ ենք, հպարտ ենք, որ կուսակցութիւնն ունի նման լիտեր: Հանրապետականը մէկ լիտերի կուսակցութիւն է եւ մնալու է մէկ լիտերի կուսակցութիւն: Այդ լիտերը Սերժ Սարգսեանն է», - կուսակցութեան գործադիր մարմնի նիստէն յետոյ լրագրողներու հետ զրոյցին ըսած է Շարմազանովը:



Էտուարտ Շարմազանով

եանին, պարոն Սարգսեանն արդէն յայտարարել է, որ ինքն անդամակցելու է Հայաստանի Հանրապետական կուսակցութեանը»:

ՀՀԿ խօսնակի պնդմամբ՝ սահմանադրական բարեփոխումներէն յետոյ այլեւս գործնականին մէջ անհնար կը դառնայ ըլլալ քաղաքական գործիչ, զբաղիլ քաղաքականութեամբ, բայց չըլլալ այս կամ այն կուսակցութեան ներկայացուցիչ:

«Իմ կուսակցութիւնը ժողովուրդն է, դա արդէն 20-րդ դարի լոզունգ է», ըսած է Շարմազանովը:

«1000 Դրամներու» Մասին Օրինագիծը Առաջին Ընթերցմամբ Ընդունուեցաւ

Հայաստանի Ազգային ժողովը 102 կողմ, 3 դէմ ձայներով առաջին ընթերցմամբ ընդունած է Կառավարութեան կողմէ ներկայացուած «ՀՀ պաշտպանութեան ժամանակ զինծառայողներու կեանքին կամ առողջութեան պատճառով վնասներու հատուցման մասին» եւ կից ներկայացուած օրէնքներու նախագիծերը, որ յայտնի է «1000 դրամի նախագիծ» անունով:

Յիշեցնենք, որ պաշտպանութեան նախարարի այս նախաձեռնութիւնը մեծ աղմուկ յառաջացուցած էր հանրութեան մէջ:

Ըստ նախագիծին, զոհուածներու եւ առաջին կարգի հաշմանդամութիւն ստացած զինծառայողներու ընտանիքները միանուազ կը ստանան 10 մլն դրամ (2-րդ խումբի հաշմանդամները՝ 5 մլն), իսկ յետագային՝ 20 տարուայ ընթացքին՝ ամսական 300 հազար դրամ:

Սպաներու համար այդ գումարը կը կազմէ ամսական 300 հազար դրամ, ենթասպաներու համար՝ 250 հազար դրամ, շարքայիններու համար՝ 100 հազար դրամ (զոհուածներն ու առաջին խումբի հաշմանդամները): Այս պարագային սպային կամ անոր ընտանիքին 20 տարի շարունակ կը յատկացուի 82 մլն դրամ, ենթասպաներուն՝ 70 մլն, շարքայիններուն՝ 58 մլն:

Երկրորդ խումբի հաշմանդամներուն համար նախատեսուած է համապատասխանաբար 200, 150 եւ 100 հազար դրամ ամսական:

Երկրորդ խումբի հաշմանդամներուն համար նախատեսուած է համապատասխանաբար 200, 150 եւ 100 հազար դրամ ամսական:

ՀԲԱ Վանաձորի Գրասենեակը Ապրիլեան Քառօրեայի Բացթողումներու Մասին

Հելսինկեան քաղաքացիական ասամպլիայի վանաձորի գրասենեակի անդամները պնդած են, որ ապրիլեան քառօրեայ պատերազմին հակակամ կողմը աւելի քիչ գոհեր կ'ունենար, եթէ բանակին մէջ զինարհեստական սարք ըլլար, զինուորական մեքենաները ապահովուած ըլլային վառելիքով, իսկ դիրքապահ զինուորներուն աջակցող ուժերը չուշանային:

Բանակին մէջ առկայ այս ու միւս բացթողումները գրասենեակի աշխատակիցները ներկայացուցած են իրենց պատրաստած զեկոյցին մէջ: Զեկոյցի համահեղինակ Արմինէ Սադիկեանի խօսքով. «Եղել են դէպքեր, երբ ճանապարհին թանկերը անսարք վիճակում են եղել, մարտկոցները հետ կապուած ինդիք է եղել: Տեսել են դէպքեր, երբ պենզինի փոխարէն ջուր է լցուած եղել թանկերի մէջ կամ իրենց

որդիւնների ծառայակիցների միջոցով յայտնել են, որ փամփուշտները վերջացել են, ձեռնամարտի են բռնուել: Դա խնդիրներ են, որ ծնողները իրենց աչքերով են տեսել», - ըսաւ Արմինէ Սադիկեան:

Զեկոյցին համաձայն՝ քառօրեայ պատերազմի գոհերու գերակշիռ մասը նիւթապէս անապահով ընտանիքներէն են:

Զեկոյցը ուղարկուած է Պաշտպանութեան նախարարութիւն, Դատախազութիւն, ՄԻՊ-ին, Քննչական կոմիտէ:

Գլխաւոր դատախազ Արթուր Դաւթեան նշեց, որ ղեռ ծանօթ չէ զեկոյցին: Իսկ ՊՆ նախարարի աւագ խորհրդական Ալիկ Աւետիսեանը նշեց, որ ղեռ պէտք է մանրամասն ուսումնասիրեն հոն տեղ գտած իւրաքանչիւր տուեալ: Ան չբացատրեց, որ հնարաւոր է որոշ դէպքերու մէջ քրէական գործ յարուցուի:

«Հանրապետութիւնը», «Քաղաքացիական Պայմանագիրը» Եւ «Ժառանգութիւնը» Պիտի Միաւորուին



Արամ Զ. Սարգսեան, Նիկոլ Փաշինեան եւ Ռաֆֆի Յովհաննիսեան

«Ժամանակ» թերթը գրած է. «2017 թուականի Ապրիլի 2-ին կայանալիք խորհրդարանական ընտրութիւններին ընդառաջ՝ ընդդիմադիր քաղաքական դաշտը դաշինքներ կազմելու աքտիւքնարկումներին մէջ է»:

«Քաղաքացիական Պայմանագիրը» կուսակցութիւնը, դէմ է կարճաժամկէտ դաշինքներուն, ան կարեւոր կը համարէ յետագային մէկ ընդդիմութիւն դառնալու գաղափարը:

«Հանրապետութիւն» կուսակցութեան առաջնորդ Արամ Զ. Սարգսեանը, որ նաեւ ներկայ էր ՔՊ-ի արտահերթ համաժողովին, բազմիցս յայտարարած է, որ յառաջիկայ ընտրութիւններուն կը պատրաստուի մասնակցիլ դաշինքով եւ կը գործակցի այն ուժերուն հետ, որոնք դէմ են Եւրասիական տնտեսական միութեան:

Այս ուժերուն հնարաւոր է միանայ նաեւ Եւրալիկերայնացման ջատագով «Ժառանգութիւն»-ը: «Ժառանգութիւն» կուսակցու-

թեան փոխնախագահ Արմէն Մարտիրոսեանը հաստատած է, որ այժմ բանակցութիւններ կը տանին ընտրութիւններուն դաշինքով մասնակցելու համար, սակայն գործընթացին չվնասելու համար անուններ չեն հրապարակեր:

Մարտիրոսեան ընդգծեց, որ վերջնական յայտարարի գալու համար կարեւոր է նաեւ կուսակցութիւններու արտաքին քաղաքական կողմնորոշումը՝ Հայաստանի ինքնիշխանութեան հարցը. «Մենք կողմնակից ենք, որ Հայաստանը բոլորի հետ նորմալ յարաբերութիւններ ունենայ եւ որեւէ պետութիւնից, այս դէպքում՝ Ռուսաստանից, վասալային կախուածութիւն չունենայ այն աստիճան, որ վարչապետի պաշտօնին «նամեսանիկ» ուղարկեն:

Հաւանաբար «Հանրապետութիւն»-«Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցութեան միաւորման մասով որոշումը հանրութեանը յայտնի կըլը դառնայ մօտ օրերս»:

Ընդդիմադիր Դաշտին Մէջ Միաւորման Հնարաւոր Տարբերակներ Կը Քննարկուին

Կառավարութեան բարեփոխումներու ծրագրին հետ յոյս չկապող ու 2017-ի ելեւմտային նախագիծը խիստ քննադատութեան ենթարկող ընդդիմադիրները կը կարծեն, որ Հայաստանը ճգնաժամային վիճակէն դուրս բերելու ամենարագ միջոցը 2017-ի Ապրիլի կայանալիք խորհրդարանական ընտրութիւններն են:

Ընդդիմադիր ուժերը չեն բացառած միաւորումը, նշելով տարբեր պայմաններ: ՀԱԿ խմբակցութեան քարտուղար Արամ Մանուկեանը ըսած է. «Խնդիրը պէտք է դրուի հսպէս՝ ստեղծուած է այլընտրանք, կենտրոն, բեւեռ, որը կարող է Հանրապետական կուսակցութեանը գրկել մենիշխանութիւնից»:

«Լուսաւոր Հայաստան» կուսակցութեան մէջ եւս քննարկած են ընդդիմադիր դաշտի միաւորման հնարաւոր գրոյցներ: Այս մասին պատգամաւոր Էտմոն Մարուքեան ըսած է. «Կուսակցութիւնում ներքին քննարկումներին մէջ ենք, ՏԻՄ ընտրութիւններին ժամանակ էլ ենք որոշակի բանակցութիւններ ունեցել ՀԱԿ-ի հետ, եւ մենք լիպերալ ուժերի մեր ցուցակում նշել ենք նաեւ Հայ Ազգային Գոնկրէսին: Այսինքն,

դրանք էն ուժերն են, որոնց հետ մենք կարող ենք համագործակցել, նաեւ՝ ընտրութիւններին մասնակցելու հարցով»:

«Ժառանգութիւնը» եւս չէ բացառած միաւորման հնարաւորութիւնը: «Եթէ տեղի է ունենալու միաւորում, ապա դա պէտք է լինի յստակ քաղաքական օրակարգի շուրջ: Այն պէտք է ներառի բոլոր այն խնդիրները, որոնք լուծում չեն ստացել այս 25 տարիների ընթացքում: Եթէ ուղղակի յայտարարուի, որ մենք միանում ենք, որպէսզի տապալենք Սերժ Սարգսեանին եւ Հանրապետական կուսակցութեանը, ապա չեմ կարծում, որ դա լինելու է արդիւնաւէտ», - ըսած է խմբակցութեան պատգամաւոր Զարուհի Պոստանճեանը:

Ազգային ժողովի նախկին նախագահ, հանրապետական պատգամաւոր Սամուէլ Նիկոյեանը յայտնած է. «Եւ մարտավարական առումով, եւ միջանձնային յարաբերութիւնների առումով, բազմաթիւ այլ առումներով չեմ կարծում, որ ընդդիմութիւնը կարող է միաւորուել: Հնարաւոր է՝ որոշակի միաւորումներ լինեն, բայց կլուպի առումով չեմ կարծում, որ ընդդիմութիւնը միասնաբար հանդէս կը գայ»:

ԼՈՒՐԵՐ

«Չայաստանի Նկատմամբ Արեւմուտքի Եւ Ռուսիոյ Յետաքրքրութիւնը Կը Շատնայ»

Հայաստանի նկատմամբ Արեւմուտքի եւ Ռուսիոյ հետաքրքրութիւնը կը մեծնայ, ըսած է Ռազմավարական եւ ազգային հետազոտութիւններու հայկական կեդրոնի ղեկավար, քաղաքագէտ Մանուէլ Սարգսեանը:

Անոր խօսքով՝ անորոշ իրավիճակը, որ ստեղծուած է ԱՄՆ նոր նախագահի ընտրութենէն յետոյ, փաստացի կը մտահոգէ բոլորին: Ան նշեց, որ Եւրոպայի մէջ բարդ իրադրութիւն ստեղծուած է ինչպէս նշուած հանգամանքի, այնպէս ալ մինչեւ հիմա տարուող քաղաքականութեան պատճառով:

Անոր կարծիքով Ռուսիան իր հերթին կ'ընէ նոյն բանը: «Մենք տեսնում ենք Հայաստանին արուող նոր առաջարկներ: Բոլոր կողմերից ակտիւացում է նկատուում ազդեցութեան գոտու ընդլայնման նպատակով: Ես կարծում եմ, որ Հայաստանի նկատմամբ հետաքրքրուածութիւնը պէտք է շատ մեծ լինի: Եթէ վերջնէնք մեր տարածաշրջանը, ապա վրաստանում Արեւմուտքը ինդիւրներ չունի, Ատրպէյճանում ներկայիս ռեժիմի եւ Ատրպէյճան-Թուրքիա յարաբերութիւնների հետ լուրջ խնդիրներ կան: Կարելի է ասել, որ Հայաստան-



Քաղաքագէտ Մանուէլ Սարգսեան

նի նկատմամբ հետաքրքրութիւնը կը մեծանայ», - ըսած է Մանուէլ Սարգսեանը:

Քաղաքագէտը նշեց, որ Երեւանը պէտք է վերանայի իր մօտեցումները: «Նախագահ Սերժ Սարգսեանը նոյնպէս յայտարարել էր, որ Ռուսաստանից վախը բոլորին ստիպել է հրաժարուել մեծ հնարաւորութիւններից: Դա երկիրը դրել է ներկայիս վիճակի մէջ: Հիմա ուղղակի յանցագործութիւն է նոյն ոգով շարունակելը», - ըսած է քաղաքագէտը:

Քննարկուած Է Սուրիահայ Գործարարներուն Առեւտուրի Կէտեր Յատկացնելու Խարցը

Սփիւռքի նախարարութիւնը քննարկած է սուրիահայ գործարարներու արտադրանքը իւրացնելու նպատակով Երեւանի գետնանցումներուն մէջ, գետնուղի կայարաններուն յարող հատուածներուն մէջ տարածքներ տրամադրելու հարցը: Այս մասին «Սուրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՉԿ նախագահ Լենա Հալլաճեանի հետ հանդիպման ըսած է սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեանը:

Նախարարութեան լրատուական ծառայութեան համաձայն՝ քննարկուած են տարիներ շարունակ Հայաստան հաստատուած սուրիահայերուն բժշկական խորհրդա-

տուութիւն մատուցած սուրիահայ բժիշկներուն խրախուսելու հարցը, որոնք անվճար բժշկական օգնութիւն տրամադրած են իրենց հայրենակիցներուն:

Նմանատիպ օգնութիւնները կազմակերպուած են ՀԲԸՄ-ի կողմէ տրամադրած տարածքին մէջ եւ անոնց օգնութեամբ ձեռք բերուած է համապատասխան սարքաւորումներ: Շուտով «Սուրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՉԿ-ն եւ ՀԲԸՄ-ը կը նախապատրաստուին այդ աշխատանքներուն տալ իրաւական կազմակերպական ձեւ եւ ծառայութիւնը դարձնել բուժարանային ծառայութիւն:

Եւրոպայի Խորհուրդի Յանձնաժողով՝ «Կաշառակերութիւնը Տակաւին Խնդիր Է Չայաստանի Պատժիչ Համակարգին Մէջ»

Խոշտանգումներու, անմարդկային կամ արժանապատուութիւնը ստորացնող վերաբերմունքի ու պատիժներու կանխման եւրոպական յանձնաժողովը Հայաստան կատարած 4-րդ այցելութեան արդիւնքով գեկոյց հրապարակած է:

Փաստաթուղթին մէջ նշուած է, որ իրենք հնարաւորութիւն ունեցած են գնահատել իշխանութիւններու ձեռնարկած միջոցները, որոնք իրականացած են նախորդ այցելութիւններէն յետոյ, յանձնաժողովի տուած յանձնարարականներէն յետոյ:

Այդ կապակցութեամբ չատուկ ուշադրութիւն յատկացուած է ոստիկանութեան կայանքին տակ գտնուող անձանց նկատմամբ դատան վերաբերմունքը կանխարգիւծող նախազգուշական միջոցներուն, ինչպէս նաեւ կալանավայրերուն մէջ անոնց պահելու պայմաններուն: Պատուիրակութիւնը այցելած է նաեւ հոգեբուժական հաստատութիւններ ուսումնասիրելու նպատակով:

Յանձնաժողովը Հայաստանի իշխանութիւններուն կոչ ըրած է ուժեղացնել ՀԲԾ անձնակազմը:

Պատուիրակութիւնը առաջին անգամ այցելած է Արմաւիրի եւ Վանաձորի բանտերը, ինչպէս նաեւ ստուգումներ իրականացուցած է Նուպարաշէն, Երեւան-Կեդրոն բանտերուն եւ Դատապարտեալներու հիվանդանոցին մէջ:

Չեկոյցին մէջ նշուած է, որ կաշառակերութիւնը տակաւին խնդիր է Հայաստանի պատժիչ համակարգին մէջ եւ Յանձնաժողովը իշխանութիւններուն կոչ ըրած է աշխուժացնել ջանքերը այդ երեւոյթին դէմ պայքարով:

Հայաստանի ղեկավարութիւնը, ի պատասխան այդ գեկոյցին, պատրաստակամութիւն յայտնած է համագործակցիլ Յանձնաժողովի հետ թէ՛ պատուիրակութիւններու այցելող թեթեւեղութիւններու առումով, թէ՛ յանձնարարականներուն ի պատասխան ընդունած միջոցներու ծրագրով:

Սերժ Սարգսեան՝ «Իսկանդեր» Հրթիռները Հակաթոյն Են



Չայաստանի նախագահ՝ Սերժ Սարգսեան

Հայկական կողմը կ'ընդունի Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը, բայց այդ ժողովուրդի ինքնորոշման իրաւունքին չի հակասէր, յայտնած է Հայաստանի նախագահ՝ Սերժ Սարգսեան, ռուսական «Ռոսիա սեկտորի» միջազգային լրատուական գործակալութեան գլխաւոր տնօրէն Տիմիթրի Կիսելցովին տուած հարցազրոյցի ընթացքին:

Ան ըսած է, որ դարաբաղեան խնդիրը մի քանի անգամ մօտեղած է լուծման եւ տարածքային ամբողջականութեան սկզբունքը նոյնպէս ներառուած է փաստաթուղթին մէջ, բայց Ատրպէյճանը միշտ ետ կանգնած է ստորագրելէ:

Հայաստանի կողմէ «Իսկանդեր» ձեռք բերելու մասին, նախագահը ըսած է, որ հայկական կողմը Ռուսիոյ հետ տարածաշրջանին մէջ ուժերու հաւասարակշռութիւնը պահպանելու մասին պայմանագիր ունի ու կը կարծէ, որ Ռուսիա անկէ ելլելով ընդառաջած է Հայաստանի խնդրանքին եւ տրամադրած «Իսկանդեր» հրթիռները:

«Գաղտնիք չէ, որ Ատրպէյճանը վերջին մի քանի տարուայ ընթացքում կանոնաւոր ձեռք է բերել նորագոյն սպառազինութիւն: Մենք չունենք ֆինանսական այն հնարաւորութիւնները, որոնք ունի Ատրպէյճանը, բայց մենք անընդհատ փորձում ենք հաւասարակշռել իրավիճակը՝ ձեռք բերելով հակաթոյն: Իմ կարծիքով՝ այս դէպքում «Իսկանդերը» հակաթոյն է», - ըսած է Սերժ Սարգսեանը:

Անոր խօսքով, խնդիրը պէտք է փոխզիջումներու միջոցով լուծուի, եւ այս այն դէպքը չէ, որ յաղթած է Հայաստանը կամ Ատրպէյճանը, կամ ալ Ղարաբաղը: Երկու երկիրներու ղեկավարներուն միջեւ թէ՛ գիծի ստեղծման Սարգսեան դրական տրամադրուած է:

Սարգսեանը ըսած է, որ ապ-

րիլեան պատերազմին մարտական գործողութիւնները դադրեցնելու գործով Ռուսիոյ դերը առանցքային եղած է:

«Հայ հասարակութեան մէջ միանշանակ չընդունուեց Ռուսաստանի հաւասարակշռուած քաղաքականութիւնը, յամենայն դէպս՝ գանգուածային լրատուամիջոցների, ԱԳՆ-ի մակարդակով: Կարելի է հասկանալ հայ հասարակութեանը, որովհետեւ Հայաստանում բնակչութեան ճնշող մեծամասնութիւնը համոզուած էր, որ վտանգի դէպքում Ռուսաստանը միշտ կը լինի Հայաստանի կողքին: Բայց, ինչպէս ասում են՝ երազելը վնաս չէ. մարդկանց մի մասը հասկացաւ, որ Ռուսաստանը ստիպուած էր պահպանել հաւասարակշռութիւնը, հակառակ դէպքում դա կարող էր հանգեցնել աւելի լայնածաւալ գործողութիւնների»:

Հայաստանի նախագահը ըսած է նաեւ, թէ վերջնական խաղաղութեան յոյս ունի, բայց Ատրպէյճանը «անկանխատեսելի երկիր է»:

Անդրադառնալով Եւրասիական Տնտեսական Միութեան, Սերժ Սարգսեան նշած է. «ԵՏՄ-ն մեծ ապագայ է, ամէն դէպքում՝ մեզ համար»:

Սարգսեանի խօսքով, իր երազանքն է, որ իրագործուի ազգային գաղափարը՝ իսկ այդ ուժեղ, ամուր պետութիւն դառնալն է, խնդիրներ չունենալը Ատրպէյճանի եւ Թուրքիոյ հետ: Նախագահը կ'երազէ, որ Ղարաբաղը ըլլայ կամ Հայաստանի կազմին մէջ, կամ ալ՝ անկախ պետութիւն: Իսկ ամենաանհաւանական երազանքը այն է, որ բոլոր հայերը Հայաստան գան:

Նախագահը կը կարծէ, որ յառաջիկային տնտեսական աճը կ'արագանայ, քանի որ թէ՛ վարչապետը, թէ՛ իշխանութիւնը տրամադրուած են: Սարգսեան այդ գործին մէջ նոր կառավարութիւնը շարժիչ ուժ կը համարէ:

ԿԱՐՁՈՒ ՄՐԱԸ
ՓԱՍՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ԸՆՈՒՁԱՅՆԵԼ (626) 797-7680

Հայ Պատգամաւորի Հարցը Չայրոյթ Պատճառած է Թուրքիոյ ԱԳ Նախարար ՄԵԼՈՒՔ ՉԱՆՈՒՇՈՂՆԻԿԻՆ



«ՆԱԹՕ»-ի խորհրդարանական վեհաժողովի 62-րդ ամենամեայ նստաշրջանի ժամանակ Պոլսոյ մէջ հայ պատգամաւոր Կորիւն Նահապետեան իր հարցումով գայրացուցած է Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մեւլութ Չաւուշօղլուն: Թրքական «Հուրիէթ» պարբերականի փոխանցմամբ՝ Կորիւն Նահապետեան նիստի ժամանակ հարցում ուղղելով Չաւուշօղլուին, յայտարարած է, որ Թուրքիա կ'աջակցի «Իսլամական Պետութիւն» ահաբեկչական խմբաւորման:

Կորիւն Նահապետեան Չաւուշօղլուին ուղղած իր հարցումին մէջ մասնաւորապէս ըսած է. «Թուրքիա, ձեւացնելով, թէ կը կռուի ահաբեկիչներու դէմ, իրականութեան մէջ կը սպանէ քիւրտերը՝ աջակցելով «Իսլամական Պետութիւն» խմբաւորման: Ակնյայտ է, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան մէջ պաշտօնական Անգարայի որեւէ միջամտութիւն միայն պիտի վնասէ անոր՝ Թուրքիոյ միակողմանի դիրքորոշման եւ ամէն գիտով Ատրպէյճանին աջակցելու միտման պատճառով: Ատրպէյճանի կողմէն ԼՂ շփման գիծին վրայ Ապրիլի 2-5-ը սաղբած իրադարձութիւնները եւ Թուրքիոյ կողմէ կատարուած սաղբիչ յայտարարութիւնը անոր վառ ապացոյցն են: Ներկայիս, Թուրքիա իր գորքերը տեղակայած է երեք դրացի երկիրներու մէջ՝ անոնցմէ իւրաքանչիւրի պարագային առանց տուեալ երկրի կառավարութեան համաձայնութեան: Իմ հարցումս հետեւեալն է՝ Թուրքիա ինչպէ՞ս կը պատկերացնէ իր դրացիներուն հետ յարաբերութիւններու յետագայ զարգացումը: Ի պատասխան հայ պատգամաւորին հնչեցուցած հարցումին՝ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարը ըսած է, թէ իրենք կողմ են իրաքի եւ Սիրիոյ տարածքային ամբողջականութեան: Ան մեղադրած է հայկական կողմը «անարդար գտնուելու» մէջ՝ ըսելով. «Մենք կրնանք տարբեր տեսակետներ ունենալ՝ Դուք Հայաստանէն էք, ես թուրք եմ: Սակայն նախ եւ առաջ անհրաժեշտ է արդար ըլլալ: Մանաւանդ, եթէ քաղաքական գործիչներ ենք: Եւրոխորհուրդի խորհրդարանական վեհաժողովին երկար տարիներ տեսած եմ, որ դժբախտաբար մեր հայ գործընկերները երբեք արդար չեն եղած: Ինչպէ՞ս կ'ըսէք, որ մենք կ'աջակցինք ԻՊ-ին»:

Չաւուշօղլու փորձած է արդարանալ նշելով, որ Թուրքիա ձերբակալած եւ սպանած է մեծ թիւով ԻՊ զինեալներ՝ այդպիսով օգնած ըլլալով նաեւ եւրոպական երկիրներուն:

«Կը Շարունակուի Միացեալ Նահանգներու եւ Հայաստանի Սերտ ու Ամուր Գործընկերութիւնը»

ԱՄՆ պետքարտուղարի Եւրոպայի եւ Եւրասիոյ հարցերով փոխտեղակալ Պրիմիթ Պրիւքը չի կրնար կանխատեսել, թէ ինչ քաղաքականութիւն կը վարէ Միացեալ Նահանգներու յաջորդ նախագահ Տոնալտ Թրամբի վարչակազմը համաշխարհային հարցերու եւ մասնաւորապէս մեր տարածաշրջանին նկատմամբ:

Ան ԱՄՆ դեսպանատունը կայացած ասուլիսի ընթացքին՝ նշած է, որ Միացեալ Նահանգները միշտ աջակցած է տարածաշրջանի երկիրներու ժողովրդավարացման ու զարգացման, դարաբաղեան հիմնախնդրի կարգաւորման հարցով՝ ԵԱՀԿ Մինսկի խումբի ջանքերուն՝ ուղղուած հիմնախնդրի խաղաղ լուծման:

Ֆրանսայի «Ֆոնէթոն»-ին Հանգանակուած է 1.34 Միլիոն Եւրո



Արցախի ի նպաստ, ինչպէս նաեւ Սուրիոյ եւ Իրաքի աղէտեալ բնակչութիւններուն համար Ֆրանսայի «Հայաստան» հիմնադրամի կազմակերպած Ֆոնէթոն-2016-ը վերջ գտաւ Նոյեմբեր 20-ին: Այս մասին կը գրէ «Նոր Յառաջ», նշելով, որ Փարիզի, Լիոնի, Թուլուզի եւ Մարսիլիոյ հեռաձայնային կեդ-րոններէն՝ շուրջ 700 կամաւորներ չորս օրերու ընթացքին հեռա-ձայնած են 46.000 ընտանիքներու եւ ընկերութիւններու:

Շնորհիւ այդ հեռաձայնային կոչերուն կարելի եղած է չորս երկիրներէ՝ Գերմանիայէն, Ֆրանսայէն, Յունաստանէն եւ Զուիցերիայէն ձեռք ձգել շուրջ 1.34 միլիոնի նուիրատուութեան խոստում, ինչ որ անցեալ տարուան հանգանակութիւնը կը գերազանցէ 1%-ով:

Ֆրանսայի «Հայաստան» հիմնադրամը հաղորդելով այս տեղեկութիւնները, կը նշէ նաեւ, որ 1700 նոր անուններ աւելցած են նախորդ տարիներու նուիրատուներու ցանկին վրայ, նուիրատու տանիքներու եւ ընկերութիւններու ընդհանուր թիւը հասցնելով 10.200-ի:

Հանգանակուած գումարները պիտի գործածուին գլխաւորաբար երեք ուղղութիւններով՝ Հայաստանի Տաւուշի սահմանամերձ շրջանի գիւղերուն, Արցախի Ապրիլեան չորսօրեայ պատերազմէն տուժած շրջաններուն եւ Հայկաի ու Մուսուլի հայ բնակչութիւններուն օժանդակութեան:

Թուրքիոյ Մէջ Ձերբակալուած է Հայոց Ցեղասպանութիւնը Գանչցած Քիւրտ Քաղաքապետը

Թուրքիոյ Մարտին քաղաքի քաղաքապետի պաշտօնէն օրերս հեռացուած քիւրտ Ահմէթ Թուրք, որ բազմաթիւ անգամներ ներդրութիւն խնդրած է Հայոց Ցեղասպանութեան համար, 21 Նոյեմբերին ձերբակալուած է: Ձերբակալութիւնը թրքական իշխանութիւնները վերագրած են ահաբեկչութեան դէմ կատարուող հետաքննութեան: Այս մասին տեղեկացուցած է թրքական «Անատոլու» գործակալութիւնը:

Նշենք, որ 17 Նոյեմբերին Թուրքիոյ ներքին գործոց նախարարութիւնը քաղաքապետի պաշտօնէն հեռացուցած էր Ահմէթ Թուրքը: Անոր նկատմամբ հետաքննութիւն սկսած էր «պետութեան միութիւնն ու միասնականութիւնը խախտելու, զինուած ահաբեկչական խմբաւորման գումար տալու եւ



անդամագրուելու, պաշտօնական դիրքը չարաշահելու, թուրք ժողովուրդը, Թուրքիոյ Հանրապետութիւնը, Թուրքիոյ Ազգային մեծ ժողովը նուաստացնելու» մեղադրանքներով:

Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909

SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> • Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability 	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> • Estate Planning • Will & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning 	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> • Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403B
--	---	---

Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

A.B.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Անհրաժեշտ է

Coverage & Protection should be on the top of your priority list.

ԹՈՒՐԹԻՈՅ ՄԷՋ ՊԱՅՔԱՐԸ ԿԸ ՍՐԻ ԵՐՏՈՂԱՆ ԳՐԱԲ ԴՐԱԾ Է ԻՐ ԱՐՏԱՔԻՆ ՅԵՆԱՐԱՆՆԵՐՈՒՆ ԿՐԱՅ

ՍԱԳՕ ԱՐԵԱՆ

Թուրքիոյ նախագահը կարեւոր գրաններ դրած է, հարթելու համար դէպի նախագահական իշխելաձեւի մը երկիրը առաջնորդելու, իր վաղեմի նպատակը:

Այս առումով անցնող շաբաթներուն Թուրքիոյ մէջ եղած իրադարձութիւնները, պէտք է համարել Անգարայի կողմէ կատարուած կարեւոր նշաններ:

15 Յուլիսին երկիրը ցնցած ձախող յեղաշրջման հանգրուանէն ասդին, Թուրքիա կը դառնար «մեծ բանտ» մը, ու հարիւրաւոր, չըսելու համար հազարաւոր «մեղադրեալ» համարուող քաղաքացիներ կը լեցնէին երկրի գլխաւոր քաղաքներուն մէջ եղող բանտերը:

Ներքին «անհանգստութեան» եւ էրտողան-Կիւլձէն ֆոնին վրայ աճած, հակամարտութիւններ կը թեւակոխէր կարեւոր փուլ եւ իշխանական շրջանակներուն կողմէ կատարուած բռնաճնշումները «կ'աւետէին» ԱՄՆ ապաստանած Թուրք կրօնական գործիչի համակիրներուն «վերացում»ը:

Թէ, ինչքանով այս մօտեցումը կը համապատասխանէր իրականութեան, կարելի չէ գիտնալ, սակայն յստակ կը դառնար, որ իշխանութիւններուն համար ալ ամէնէն առաջնահերթ հարցը՝ պետական մարմիններու «մաքրագտում»ն էր:

Նոյնը կարելի է ըսել բանակին վերաբերել, ուր այսօր ալ էրտողանի վարչակազմը առանց աղմուկ բարձրացնելու կը շարունակէ տարբեր լծակներու ճանապարհով սեղմումներու տակ պահել երկրի բանակը:

Այս ընդհանուր իրավիճակին մէջ էրտողան բաւական «հանգիստ» գգալով, գնաց աւելի ծայրայեղ քայլերու: Թուրքիոյ մէջ ապրող ոեւէ մարդ լաւ գիտէ, որ այդ երկիրը իրողապէս կ'ապրի շղարշով ծածկուած լաւալի մը վրայ:

Այդ շղարշը անշուշտ քրտական գործօնն է: Ու տարբեր ձմրումներու, լարումներու եւ փոխ հակազդեցութիւններու կարկինը լայն բանալով, Անգարա գործի կը լծուէր ճնշելու համար քիւրտ հանրութեան մէջ ամէնէն լայնք եւ երկիստութեան հաւատացող կողմը՝ HDP-ն:

Այսպէս HDP-ի 11 պատասխանատուներ, որոնց մէջ համանախագահներ՝ Սալահ էլ Տին Տէմիրթաշն ու Վիկէն Եուքսէկտաղը բանտ կը տարուէին:

Բողոքի հաւաքներէն անդին, որպէս հակազդեցութիւն HDP-ն կը յայտարարէր, որ ժամանակաւոր կերպով պիտի դադրեցնէ իր մասնակցութիւնը երկրի խորհրդարանական աշխատանքներուն: Երկրի իշխանութիւնները այս յայտարարութիւնը կ'ընդունէին ծաղրանքով եւ վարչապետ Պինարի Եըլտըրմ յայտարարութեամբ մը հանդէս գալով հրապարակաւ կը հեզնէր HDP-ի առած որոշումը:

Այս բոլորը սպասելի էին Թուրքիոյ մէջ: Սպասելի էր նաեւ, որ HDP-ն ինք դառնար Թուրքիոյ իշխանութեան հիմնական թիրախ: Այդ չէր խնդիրը, խնդիրը «թայմինկ»ն էր ու ըստ երեւոյթին Թուրքիոյ նախագահին մօտ այնպիսի հզօր իսողաքարտեր կան, որ էրտողան չվարանեցաւ այս ծանր քայլին երթալու:

Դէպքերը մինչեւ այս յօդուա-

ծին գրուելը կը շարունակեն մնալ տիրապետութեան տակ: Այսինքն բացի երկրի արեւելեան նահանգներուն մէջ PKK-բանակ մարտերէն միւս գլխաւոր քաղաքներուն մէջ իրավիճակը կը շարունակէ մնալ խաղաղ:

Այստեղ յիշեցնելու կարգով պէտք է նաեւ լոյսին տալ Տիարպէքիւրի մէջ եղած պայթումին պարագան, որուն զոհ գացին տասնեակ անձեր: Ահաբեկչական պայթումները սկսած են սովորական դառնալ Թուրքիոյ մէջ եւ այս մէկը վատ ցուցանիշ է երկրի մը համար, որուն մասին խօսած ատեն եւրոպացի մէկէ աւելի փորձագէտներ չեն վախնար յայտարարելու, որ Թուրքիան կ'երթայ դէպի քաղաքա-

ց ի ա կ ա ն պատերազմ:

Ս ա կ ա չ ն Տիարպէքիւրի մէջ եղած պայթումը կը բնորոշուի այլ կարեւոր կէտերով, որոնց ամէնէն հիմնականը՝ պայթումին նպատակն ու թիրախն են: Այս առումով քրտական մէկէ աւելի աղբիւրներ օրին գրեցին, որ պայթումը եղած է Տահէշի ձեռամբ եւ նպատակ մը ղեկավարները, որոնք այդ ունեցած է սպաննել HDP-ի կարգ



մը ղեկավարները, որոնք այդ Շար.Պ էջ 7

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՅ ՃԱԵԿԵՐՈՅԹ

Կազմակերպութեամբ
ԱՐՍԵՆ ԿԻՏՈՒՐ ՄԱՍՆԱՃԻՂԻ

Շաբաթ, Դեկտեմբեր 31, 2016
 Երեկոյեան ժամը 8:00-էն սկսեալ
 Հ.Ս.Ս.-ի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ

New Year's Celebration
 Presented by
ARSEN GIDOUR CHAPTER
Saturday, December 31, 2016
 Starting at 8:00 p.m.
 HMM Garo Soghanalian Hall – 1060 N. Allen Ave., Pasadena

Live Entertainment by Khachig Zanian
with a special visit from Santa Clause

Մուտքի Լուր / Admission: \$65.00 • Children 6-12: \$30.00 • 5 & Under Free
 Տոմսերու համար դիմել / For Reservations Call: Avo Mazmanian (818) 913-9311

ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 73ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ՄԵՋ



Շաբաթ, Նոյեմբերի 19ին, Ռիվիերա Գանթրի Գլապեն ներս, տեղի ունեցավ պատշաճ ընդունելությունները, Լիբանանի անկախության 73րդ տարեդարձին առթիվ, որ միաժամանակ կը գուզադրվեին երկար ժամանակ է Վեր սպասուող երկրի նոր նախագահի ընտրությունների հետ:

Լոս Անճելոսի Լիբանանի գլխավոր հիւպատոս ճոնի Իպրահիմի հրաւերով տեղի ունեցած սոցիալական ընդունելության ներկայ էին հարաւային Գալիֆորնիոյ Լիբանանի տարբեր կազմակերպությունները: Հնչակեան կուսակցությունը կը ներայացնէին փոխ ատենապետ Գաբրիէլ Մոլոյեան եւ քաղաքական

դիւանի անդամ Թադէոս Քէօրոզլեան:

Ողջոյնի խօսքով հանդէս եկողները շնորհաւորեցին զեղածիծաղ Լիբանանի անկախության 73րդ տարեդարձն ու Հանրապետության նոր նախագահ Միշէլ Աունի ընտրությունը, մաղթելով ազատ, անկախ ու գերիշխան Լիբանանի ու իր խաղաղասէր ժողովուրդին ապահով ու բարգաւաճ կեանք:

Նոյնպիսի բարեմաղթություններով եւ շնորհակցական եզրափակիչ խօսքով հանդէս եկաւ հիւպատոս ճոնի Իպրահիմ:

Գործադրուեցաւ զեղարուեստական կոկիկ յայտագիր մը, մասնակցությունները Լիբանանեան «Տէպլէ» պարախումբին:

ՀՄՄ-Ի ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ Ի ՊԱՏԻ ՓԱՍՏԻՆԱ ՔԱՂԱՔԻ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄԱՐԶԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՈՒՆ

Հ.Մ.Մ.ի մարզական դիւանը զեղեցիկ գաղափարը ունեցած էր իր կեդրոնին մէջ ընդունելութիւն մը սարքելով ծանօթացնելու իր ենթակառուցներու գործունէությունները: Արդարեւ, անցեալ Երեքշաբթի Նոյեմբեր 15, 2016 «Սողանայեան» սրահ հրաւիրուած էին Փաստահանի կրթական եւ Մարզական Համակարգի պատասխանատուներէն Մարշալ Հայ Սքուլի տնօրէն Մարգ Էնտրաքըն, Դպրոցներու Խորհուրդի ատենապետ Պրայն Մգ Տոնայտ, Դպրոցներու Մարզական Խորհուրդի տնօրէն Կրիսթին Պարագա եւ Ընկերային Յարաբերություններու Խորհուրդի անդամ Նաթ Նեստար:



Ներկաներուն ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Հ.Մ.Մ. Մարզական Դիւանի ատենապետ Վահէ Աջապահեան եւ ծանօթացուց Հ.Մ.Մ.ի մարզական խումբերու պատասխանատուներն ու առաջադրանքները: Այնուհետեւ ելոյթ ունեցան Լոս Անճելոս Դպրոցներու Խորհուրդի անդամ Հուրի Խաչատուրեան, Հ.Մ.Մ.ի Վարչությունից ատենապետ Վարդան Գոճապահեան եւ Խորհրդակցական իրաւաբան Գրիգոր Մոլոյեան: Բոլորն ալ շեշտը դրին տարբեր մարզաձեւերով Հ.Մ.Մ.ի բերած նպաստը շրջանի երիտասարդության որպէս ապագայի տիրակալ եւ օրինակելի քաղաքացիները աչք երկրին: Անոնք միաժամանակ շեշտեցին նիւթա-

բարոյական աջակցությունները կարելի էր յառաջիկայ ծրագրերու յաջողությունները համար:

Խօսք առնելով վերոյիշեալ



անձնաւորությունները զնահատեցին Հ.Մ.Մ.ի մարզական եւ երիտասարդական ոլորտներու մէջ տարած աշխատանքներն ու պատասխանատուներու նուիրուածությունը իրենց օգտաշատ առաքելությունները մէջ: Անոնք խոստացան հնարաւոր միջոցներով օգտակար ըլլալ Հ.Մ.Մ.ին: Գործադրուեցաւ նաեւ զեղարուեստական պատշաճ յայտագիր մը, մասնակցությունները Նոր Սերունդ Մշակութային Միությունից պարախումբին: Տեղի ունեցաւ հիւրասիրություն:

անձնաւորությունները զնահատեցին Հ.Մ.Մ.ի մարզական եւ երիտասարդական ոլորտներու մէջ տարած աշխատանքներն ու պատասխանատուներու նուիրուածությունը իրենց օգտաշատ առաքելությունները մէջ: Անոնք խոստացան հնարաւոր միջոցներով օգտակար ըլլալ Հ.Մ.Մ.ին: Գործադրուեցաւ նաեւ զեղարուեստական պատշաճ յայտագիր մը, մասնակցությունները Նոր Սերունդ Մշակութային Միությունից պարախումբին: Տեղի ունեցաւ հիւրասիրություն:

Գործադրուեցաւ նաեւ զեղարուեստական պատշաճ յայտագիր մը, մասնակցությունները Նոր Սերունդ Մշակութային Միությունից պարախումբին: Տեղի ունեցաւ հիւրասիրություն:

ԹՈՒՐԲՈՅ ՄԵՋ ՊԱՅՔԱՐԸ ԿԸ ՍՐԻ

Շարունակուած էջ 6-էն

օրերուն Տիարալէքի կը գտնուէին:

Այս մասին եւս Թուրքիոյ հանրություններու մօտ կարելի էր հարցադրումներ ծագած են, թէ եւ ցարդ յատակ փաստեր չկան եղած ահաբեկչություններու մասին:

Վտանգաւորը Տահէշին արարքը չէ, այլ այն, որ՝ որուն ձեռքով կամ հեռակառավարիչ վահանակով (ռիմոթ ֆոնիտրով) կը գործէ Տահէշ:

Այս բոլորէն բացի, անցնող օրերուն Անգարա գտնուող ընկերոջ մը հետ խօսելէ ետք, իմացայ որ վաղիք հանգրուանը կրնայ աւելի թէժ ըլլալ Թուրքիոյ եւ մասնաւորապէս Պոլսոյ ու Անգարայի մէջ:

Ան կ'ըսէր «Քիւրտերը որոշած են կուրիլ եւ երթալ մինչեւ վերջ»: Խօսակիցս նաեւ կը յայտնէր, որ եթէ մինչեւ օրս նոյն լայնք եւ ոչ ծայրայեղական HDP կը փորձէր իշխանութեան դէմ «կատաղի» կեցուածք ունեցող քիւրտ հանրությունները գսպել, ապա այսօր իրադրությունները նոյնը չէ:

Ուրեմն ի՞նչ: Պատերա՞զմ:

Եւ ի՞նչ հիմունքով, ի՞նչ ներուժով եւ ի՞նչ բաժանումներով:

Այս տեղեկությունները հաշուի առնելէն բացի, պէտք է աչքի առաջ ունենալ Անգարայի ունեցած ընդհանրականները, որոնք ինչպէս վերը նշեցի, կարեւորագոյն գրոյթներ են՝ գսպելու եւ նոյնիսկ քաղաքական խաղէն դուրս հանելու չափաւորական քիւրտերը, որ այս պարագային HDP-ականներն են:

Առանց այդ ընդհանրություններուն, ոչ էրտողան, ոչ ալ իր տիրապետություններու տակ եղող պետական-ապահովական աբարաթը այդպիսի ծայրայեղական քայլ մը կ'առնէին:

Քիւրտ ղեկավարները բանտարկելը հեշտ է:

Այդ մէկը կատարուեցաւ լաւագոյն բեմադրություններով: Կարելի էր սակայն անոնց եւ PKK-ի միջեւ կապ մը, կամ առնչություն մը գտնուելու հարցն է, որ մինչեւ այսօր չկայ սեղանին վրայ: Ժամանակները կրնան բաւական պատասխանատու վիճակներու տանիլ Անգարայի ղեկավարները, որոնք ցայսօր ալ կը հաւատան, (երեւի պատճառներ ունին հաւատալու) որ իրենց ունեցած արտաքին գործընկերները բաւարար են ձգմելու համար, որ եւ չանիշխանական ապստամբություններ, որուն «երազը» ամէն օր աւելիով սկսած է տեղ գտնել Թուրքիոյ մէջ կուրի պատրաստ եղող քրտական շրջանակներուն մօտ:

ԿԱՅԾ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ
ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵ ՀԱՅ ԵՐԳԻԾԱԿԱՆ ՖԻԼՄ

Շաբաթ 3 Դեկտեմբեր 2016, Երեկոյան ժամը 5:00-ին
ՀԿԲՄ Կարօ Սողանալեան Մրահէն Կերս
1060 N. Allen Avenue, Pasadena, CA 91104
Մուտքի նուէր՝ \$10. Ներառյալ popcorn & soda



GAIDZ
YOUTH ORGANIZATION
PRESENTS
ARMENIAN COMEDY MOVIE

SUPER MAMA

Saturday, December 3, 2016 at 5:00 pm
AEBU Garo Soghanalian Hall
1060 N. Allen Avenue, Pasadena, CA 91104
Donation \$10 popcorn & soda Included

ՊԱՅԱՆՋՈՒԿ ԵՆ ՁՍԵՌՈՒ ՊԱՊԻԿՆԵՐ



Երեքշաբթի՝ Նոյեմբերի 17-ին մեկնարկեց է ONEArmenia-ի երկրորդ ամենամեծ «Պահանջում են Ձմեռ Պապիկներ» նախաձեռնությունը...

ONEArmenia-ն իր առջև նպատակ է դրել ապագայում տեսնել մի Հայաստան, որը ոչ թե՛ գոյատևում է, այլ առաջադիմում: 2011 թ.-ից սկսած Հայաստանն ընդունել է մոտ 18,000 սիրիացի փախստականների:

ONEArmenia-ն աշխատում է «ՀԱԼԷՊ» Հայրենակցական Բարեսիրական ՀԿ-ի հետ միասին՝ հասցնելու պրակտիկ, հետաքրքիր ու կրթական նուէրներ վերջերս Հայաստան տեղափոխված երկու հարյուր սիրիահայ երեխաների: Նուէրների նվերական ու գործնական օգուտը նախագծի միայն մի կողմն է: Դրանք նաև դրական հոգեբանական ազդեցություն կ'ունենան երեխաների վրա:

Այս նուէրները արտադրվել են տեղական եօթ ընկերությունների կողմից: Դրանք են AVA Shoes-ը, Huys-ը, #Sport-ը, «Ձանգակ» հրատարակչությունը, Honey.am-ը, Այլ կերպը եւ Goghovit Knits-ը:

Ձրակալուն բաճկոն Huys-ի կողմից: «ՀԱԼԷՊ»-ը աշխատում է մեծ

քանակությամբ երեխաների հետ, ովքեր չունեն համապատասխան ձմեռային հագուստ, որովհետև երբեք չեն գրգռել դրա կարիքը: Huys-ի բաճկոնները կ'օգնեն երեխաներին պատրաստել գալիք ձմռանը:

Տաք շապիկ #Sport-ից: Տեղական ընկերություն, որն արտադրում է առօրեայ յարմարաւէտ հագուստ:

Ձեռագործ շարֆ, որը կը գործի Goghovit Knits-ը՝ Շիրակում բնակվող մի կին, ով այս մեծ պատուէրի առիթով աշխատանքի կը հրաւիրի նաև այլ տեղացի կանանց:

Ձմեռային ամուր կօշիկներ, որոնք ձեռքով կարվում է AVA Shoes-ը ու երաշխաւորում, որ երեխաների ոտքերը տաք ու չոր կը մնան ամբողջ ձմեռ:

«Ձանգակ» հրատարակչության մէկից երեք գիրք, որոնք երեխաները իրենք կ'ընտրեն: Իհարկէ, հենց երեխաները աւելի լաւ կ'իմանան, թէ որ գիրքը աւելի մեծ սիրով կը կարգան: Այս գրքերը նաև ընտիր լրացում կը լինեն արեւմտահայերէնից արեւելահայերէն տեղափոխուած իրենց ուսումնական ընթացքի համար:

Կրթական ու զուարճալի սեղանի խաղ՝ Այլ կերպիկ: Այն Հայաստանում մեծ տարածում գտած Այլ կերպ խաղի մանկական տարբերակն է: Անգլալեզու Taboo խաղի հայկական տարբերակը երեխաներին հնարաւորութիւն կը տայ ուրախ ու մրցակցային միջավայրում զարգացնել արեւելահայերէնի իրենց գիտելիքները:

Տեղական ու բնական մեղր honey.am-ի կողմից: Այն լաւ է երեխաների իմունային համակարգի համար, պայքարում է սեզոնային հիւանդութիւնների դէմ, ինչպէս նաև խթանում է առողջ ապրելակերպ՝ վերամշակուած քաղցրեցնողների փոխարէն բնական տարբերակ առաջարկելով:

Այս Նոր տարի դուք կարող էք դրական փոփոխութիւն մտցնել երկու հարիւր սիրիահայ երեխաների կեանքերում: Նուէրների այս փաթեթները երեխաներին կ'օգնեն իրենց նոր կեանքին ընտելանալ մի քիչ աւելի ջերմ, մի քիչ աւելի ուրախ ու շատ աւելի դրական միջավայրում: Մասնակցէք արշաւին www.onearmenia.org/campaign կայքում:

ՀԱՅԱՍՏԱՆ «ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԱՏԵՍԻԼ-2016»-ԻՆ ԳՐԱԲԵՑ ԵՐԿՐՈՐԴ ԴԻՐՔԸ



Շաբաթ օր աւարտին հասած է Մալթայի մայրաքաղաք Վալետայի մէջ տեղի ունեցած «Մանկական Եւրատեսիլ-2016»-ը: Երգի միջազգային մրցոյթին առաջին դիրքը գրաւած է Վրաստանը, Մարիամ Մամադաշվիլիի մասնակցութեամբ (239 կէտ), իսկ Հայաստանի ներկայացուցիչներ Մերի Վարդանեանն ու Անահիտ Աղամեանը 7 կէտի տարբերութեամբ (232) գրաւած են երկրորդ դիրքը:

«Եւրատեսիլեան» բեմին ներկայացած են 2-րդ համարի ներքեւ՝ «Տարբեր» երգով, որու հեղինակներն են Նիկ Էգիբեանն ու Աւետ Բարսեղեանը: Մրցութային համարի բեմադրութեան մէջ ընդգրկուած էին նաև 4 պարուհիներ: Անպարարներ Սօս եւ Վիքթորիա Պետրոսեաններու յատուկ աճաբարական հնարքի շնորհիւ աղջիկները ելոյթի ժամանակ աննկատ զգեստափոխուած էին՝ ներկայանալով ճերմակ միանման զգեստներով:

SEROP'S CAFE GREEK & LEBANESE FOOD SERVING BATON ROUGE SINCE 1979

Թե՛նոր Մը Կ'ուզուի Lend Me a Tenor A COMEDY IN 2 ACTS 30 ԻՆՈՒՐ / JANUARY 14-15 / 21-22 / 28-29, 2017

Ձեր Ծանուցումները Վստահեցեք «Մասիս» Շաբաթաթերթին T: (626) 797-7680 massis2@earthlink.net

Տոմսերը կարելի է ապահովել / Tickets available at: Գ.Բ.Ս.Ի ԳՐԱՍԵՆՍԱԿԸ / A.G.B.U. OFFICE (626) 794-7942

President Sarkisian: Armenia's Iskander Missiles are 'Antidote' Against Azerbaijan



YEREVAN (RFE/RL) -- Armenia regards its sophisticated missiles recently acquired from Russia as a new deterrent against Azerbaijan's possible attempts to achieve a military solution to the Nagorno-Karabakh conflict, President Serzh Sarkisian said in an interview published on Thursday.

He also told the state-run Russia Today news agency that the Armenian government remains committed to a compromise peace deal with Baku based on key principles advocated by the U.S., Russian and French mediators.

Sarkisian asserted that Yerevan got hold of the Iskander missiles in an effort to shore up the military balance in the conflict zone. "It's no secret that Azerbaijan has regularly acquired state-of-the-art weapons for the last several years," he said. "We don't have the kind of financial resources which Azerbaijan has, but we constantly try to balance the situation, finding antidotes.

"I think that in this case Iskander is such an antidote. Of course, arms race is a bad thing and we don't want it. But what can you do when you are

threatened with war and extermination on a daily basis?"

With a firing range of at least 300 kilometers, Iskander systems are known for their precision and ability to overcome modern missile defense shields. The Armenian military demonstrated them for the first time on September 21 during a parade in Yerevan.

Armenian officials have said in the past that Azerbaijan's oil and gas installations could be targeted if Baku attempts to end the Karabakh conflict by force. The Armenian army was until recently able to do attack them only with less advanced Scud-B and Tochka-U missiles.

Azerbaijani President Ilham Aliyev renewed his threats of military action over the weekend at the start of large-scale military exercises conducted by Azerbaijan. He specifically warned of a repeat of offensive operations launched by his troops in Karabakh in April.

"If [the Armenians] want a peace-

Continued on page 4

European Commission: Turkey Supported Azerbaijan During April Clashes in Karabakh

BRUSSELS — "Turkey was vocal in its support for Azerbaijan during clashes in April 2016 in Nagorno-Karabakh," the European Commission said in a report on Turkey, published on November 9.

Քոյր Արուսեակ Լոս Անճելըս կը գտնուէր Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Մէրլին Երեւանեաններու յատուկ հրահանգով, որպէսզի ներկայ գտնուի, տասը տարի է կրկնուող, Մէրլին Երեւանեանի կազմակերպած դրամահաւաքին, որուն նպատակն էր Քոյր Արուսեակի «որբերուն» օգնել. «Տասը տարի առաջ անոնք Կիւմրի եկան եւ երբ տեսան այդտեղ կատարուած աշխատանքը հիացան եւ անկէ ի վեր ամէն տարի իրենց տան մէջ կը հիւրընկալեն հանգանակային ձեռարկներ ապահովելով տարեկան մնայուն գումար մը Կիւմրիի կեդրոնին, անոնք դարձան մեր մնայուն նուիրատուները»: Այսպէս բացատրեց Քոյր Արուսեակ իր Քալիֆորնիա այցի պատճառը՝ դրուատելով Երեւանեան ամուլը եւ անոնց կատարած լուռ ու աստուածահաճոյ ծառայութիւնը:

Առիթը յարմար էր նաեւ մեր հանրութեան ծանօթացնելու Քոյր Արուսեակ Սաճոնեանն ու իր նուիրումը հայրենիքին եւ հայրենի մանուկներուն:

Քոյր Արուսեակ Սաճոնեան ծնած ու հասակ առած է մայր գաղութ Հալէպի մէջ, կիլիկեցի վերապրած բազմանդամ ընտանիքի մը մէջ, իր ուսումը ստացած է Հալէպի Անարատ Յղութեան վարժարանը, ուր մայրապետներու կրօնական դաստիարակութիւնը միանալով իր ընտանիքի հայաբոյր ու քրիստոնէական մթնոլորտին՝ յատուկ դրոշմ մը ձգած էր անոր մանուկ հոգիին վրայ, իր մէջ արմատաւորելով հաւատքը՝ հանդէպ Աստուծոյ, եւ հաւատարմութիւնը՝ հանդէպ ազգին: Ուսումնական շրջանին մայրապետներու հետ մօտէն շփուելով անոր մէջ արթնացած էր հիացմունքի զգացու-

մը միանձնուհիներու անձնուրաց նուիրումին՝ պատանիներու դաստիարակութեան ոլորտի մէջ: Իմ հարցումիս թէ ինչպէ՞ս կոչուած ունեցաւ՝ «Օր մը իմ դաստիարակ քոյրերէս՝ քոյր Ֆելիսիթէն ինծի Սրբուհի Թերեզայի գիրքը տուաւ կարդալու, գիրքը աւերտելուս ես ինծի ըսի՝ «ես ալ կրնամ այսպէս ըլլալ, նուիրուիլ Աստուծոյ եւ անոր ընդմէջէն դաստիարակել պատանիները. սակայն ես հայ եմ պէտք է միանամ Հայ մայրապետներու միաբանութեան ...» եւ 19 տարեկանին ան կը միանայ Հռոմի Անարատ Յղութեան Հայ Քոյրերու Միաբանութեան, կ'աւարտէ անոր 3 տարուան կրօնական դաստիարակութեան շրջանը եւ իր ուխտը կատարելով կը մեկնի Միացեալ Նահանգներ համալսարանական բարձրագոյն ուսում ստանալու, միաժամանակ կ'ուսումնասիրէ շրջանի կարելիութիւնները ու հայկական համայնքի պատրաստակամութիւնը հայկական ամենօրեայ վարժարան մը հիմնելու, եւ Քոյր Արուսեակի ուսումնասիրութիւններուն դրական արդիւնքի լոյսին տակ միաբանութիւնը կը որոշէ Միացեալ Նահանգներու առաջին վարժարանը հիմնել եւ այդպիսով իր դպրոցներու ոսկի շղթան կ'երկարէ Ամերիկա, ուր կազմաւորուելու սկսած էին նոր հայկական գաղութներ:

1967ին քոյր Արուսեակ Սաճոնեան Քոյր Հռիփսիմէ Զիֆթելեանի եւ Քոյր Վալանթին հետ մեծ գոհողութիւններով եւ միացեալ ջանքերով կը հիմնէ Ֆիլադելֆիոյ Հայ Քոյրերու վարժարանը: Հոն է որ քոյր Արուսեակ կը սկսի իր առաջին առաքելութիւնը իր շուրջ հաւաքելով հայկական մեծ համայնք մը: Քոյր Արուսեակ յաջողած էր իր առաքելութեան մէջ, նաեւ յարատեւ աշխատանքով վարժարանը հասցուցած էր յաջող ընթացքի, սակայն տակաւին երազ ունէր անկատար. ան կ'ուզէր հասնիլ իր սիրեցեալ հայրենիքին եւ ծառայել անոր, քանիցս փորձած էր՝ սակայն իր առաջարկները հանդիպած էին մեծաւորուհիներու մերժումին՝ մեկնելով հոն տիրող սովետական կարգերու իրավիճակէն, թէեւ Քոյր Արուսեակ յաջողեցաւ 2 անգամ աշակերտներու հետ այցելել Սովետական Հայաստան եւ ծանօթանալ անոր, բայց հոն ծառայելու երազը կը մնար անկատար սակայն վառ: վերջապէս տարիներ ետք 1988ի ահաւոր երկրաշարժը

առիթը ստեղծեց անոր: Քոյր Արուսեակ առաջիններէն էր որ 1990ին հրաժարելով Հռոմի միաբանութեան իր փոխանորդի պաշտօնէն հասաւ Հայաստան, ինք եւ Քոյր Արշակունցի տեղափոխուեցան Կիւմրի. քոյր Արուսեակ այդ միջին օրերը այսպէս կը բացատրէր «1990ին գացի նախ Սպիտակ ապա Հայաստանի Հիւսիսային գիւղերը Արեւիկ, Փանիկ, Լանչիկ. անոնց գիւղապետները մեզի հրաւիրեցին որպէս դպրոցներու կրօնքի ուսուցիչ, յետոյ մենք լուսաւորութեան նախարարութեան կողմէ պաշտօնապէս ընդունուեցանք որպէս կրօնքի դասատու գիւղերու մէջ: Կիւմրին եղաւ մեր կեդրոնը որովհետեւ այդտեղ կը գտնուէր Հայ Կաթողիկէ առաջնորդութիւնը»:

Այսպիսով քանի մը քոյրերով անոնք, այդ դժուարին պայմաններու մէջ, մասնակից դարձան Հայաստանի վերանկախացման գործընթացին, սակայն անոնց նպատակը տկարութիւն չէր ճանչնար Քոյր Արուսեակի Աստուծոյ հանդէպ ունեցած հաւատքը կը զօրացնէր անոր յոյսը սրբելու դժբախտի մը արցունքը եւ ժպիտ դնելու երկրաշարժի որբուկներու դէմքին: Ան յաջողեցաւ 1992ին պաշտօնապէս Ա.Յ.Հ.Ք.Միաբանութեան մասնաճիւղ մը հաստատել Կիւմրիի մէջ : Որբերու հետ աշխատիլը անոնց ծառայելը որքան որ բաւարարութիւն եւ գոհունակութիւն կուտար Քոյր Արուսեակին բայց նաեւ մեծ պարտաւորութիւն եւ օրըստօրէ նոր պատասխանատուութիւններ կը դնէր անոր ծառայասէր անձին «Յաճախ դասի պահուն ականատես կ'ըլլայի անօթութենէ գետին ինկող պատանիներու կամ մանուկներու այդ ինծի մտածել տուաւ նոր լուծումներ գտնելու...» ահա այսպէս 1994-ին կեանքի կոչուեցաւ Կիւմրիի վանայ ձորի Ամառնային ճամբարը, 1996-ին Պրն.Պօղոսեան կ'առաջարկէ մնայուն որբանոցի գաղափարը եւ կը նուիրէ հողը կը ստանցնէ շէնքի շինութիւնը եւ տարեկան ապրուստի ապահովութիւնը, այսպիսով 1996ին կը կառուցուի «Տիրամայր Հայաստանի Պօղոսեան կրթական կեդրոն» որբերու տունը եւ 1998-ին տեղի կ'ունենայ պաշտօնական բացումը հիւրընկալելով 65 որբեր որոնք Սպիտակի երկրաշարժէն տուժած որբեր էին, տարիներու ընթացքին անոնց մայր եղաւ Քոյր Արուսեակ մեծցան գործի տէր եղան շատեր ուսանեցան, Քոյրը բոլորին կ'ապահովէր բարերարներ, եւ շատեր ալ ամուսնացան: Քոյր Արուսեակ ուրախութեամբ կը յայտարարէ «արդէն որքան թոռներ ունիմ...»: Այսօր կեդրոնը ունի մնայուն ձեւով միայն 37 երեխաներ որոնցմէ 10 իսկական որբեր են մնացեալը լքուած դժբախտ եւ բաժնուած ընտանիքներու զաւակ-

ներ, սակայն կեդրոնը կը կազմակերպէ ամառնային ճամբար եւ կը հիւրընկալէ տարեկան աւելի քան 800 երեխայ երեք շաբթուան դրութեամբ, որոնք կը ստանան հոգեկան եւ ֆիզիքական սնունդ, կը խաղան կը կազդուրուին, կը զարգացնեն իրենց ընկերային կարողութիւնները նաեւ կը զարգացնեն դրական մօտեցում հանդէպ կեանքին ու մարդկութեան: Քոյր Արուսեակ ապահովելու համար յարատեւութիւնը սկսուած աշխատանքին նաեւ Կիւմրիի մէջ հիմնեց երիտասարդական կեդրոն ապահովելով երիտասարդներու առողջ մթնոլորտ, տարեցներու խնամքի կեդրոն եւ հերթական դրութեամբ սնունդի ապահովում կարիքաւոր ընտանիքներու:

Քոյր Արուսեակ հպարտութեամբ կը խօսի կեդրոնի երգչախումբի մասին, կեդրոնը առաջին օրէն իսկ ունի իր մնայուն երգչախումբը որուն ղեկավարն է Հայաստանի Գամերային պետական երգչախումբի ղեկավար Ռոբերդ Մէրգէյան որ Կիւմրիի երաժշտական դպրոցներու լաւագոյն ձայներով կեանքի կոչած մեր երգչախումբը, անոնք կը սորվին կրօնական, ժողովրդային եւ ազգագրական երգեր եւ հանդէս կուզան տարեկան ելոյթներով:

Հիացած եմ եւ միաժամանակ զարմացած Քոյր Արուսեակի խանդավառութեան եւ եռանդին, հարց կուտամ եկամուտի մասին՝ ան այնքան հանգիստ կը պատասխանէ «Մեր նուիրատուներն են մեր եկամուտի աղբիւրը, անոնցմէ շատեր մնայուն բարերարներ են, ինչպէս՝ Ժնեւէն Պրն Պօղոսեանը, Ամերիկայի իմ բոլոր բարեկամներս, քալիֆորնիայի օրինակ մըն է Երեւանեան ընտանիքը, տակաւին օտար անձնաւորութիւններ, կազմակերպութիւններ: Կեդրոնը հանրաժանօթ է բոլորին, կուզան, կ'այցելեն, աշխատանքը կը տեսնեն եւ... կրկին կու գան...» մեզի համար մեծ անակնկալ էր եւ օրհնութիւն այս տարի Սրբազան Քահանայապետ՝ Ֆրանսիսքո պապի այցելութիւնը Կիւմրիի Կաթողիկէ Սուրբ Վարդան եկեղեցու պատարագէն ետք, Ան որբերը, տարեցները եւ կեդրոնի աշխատանքները տեսնելու համար այցելեց մեզի, մենք զարմացած էինք ի տես այս այցելութեան...

Եթէ սկզբնական շրջանին Քոյր Արուսեակ բախասան էր դժբախտ իրադարձութեան մը գոհ որբացած մանուկներու, անոնց ժպիտ կը պարզեւէր, ֆիզիքական ու հոգեկան սնունդ սակայն հետագային փոխարինուեցաւ ընկերային դժբախտ պայմաններէն տուժած որբերով, եւ կենցաղային դժուար պայմաններ ունեցող պատանիներ

Շար.ը էջ 18



MEHER BABIAN, D.D.S.
General Dentistry

1111 S. Glendale Avenue
Suite 206
Glendale, CA 91205
Tel: (818) 547-0884
Tel: (818) 547-1476

ԳՈՒՀԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՕՐ (THANKS GIVING DAY)



ՊՕՐՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԱԳԻՍԵԱՆ

Աշխարհի համարեայ բոլոր քաղաքակրթությունները տարուայ առատ բերքի շնորհակալիքի օոնախմբութիւններ են կատարել: Գրեթէ չորս հարիւր տարիներ առաջ, ամերիկեան գաղթականութեան շատ վաղ տարիներին, գոհաբանութեան օոնակատարութիւնները կատարել են որպէս շնորհակալութեան երախտիքի օոնախմբման օր: Արմին-հայերը հազարհազար տարիներ առաջ, իրենց առաջին բերքի երախտիքը նուիրաբերել են իրենց ոսկեմայր, մայրութեան ու պտղաբերութեան աստուածուհի՝ Անահիտին:

1620 թուականին, հարիւր քսան ուղեւորներով, "May Flower" անունով մի նաւ, անգլիական նահանգաստից, Ատլանտեան ովկիանոսի ջրերով նաւարկել էր դէպի «Նոր երկիր»: Նրա ուղեւորները մտադրուել էին հաստատուել այնտեղ: Քրիստոնեայ հաւատացեալների մի խումբ, հարցականի տակ առնելով անգլիական եկեղեցու հաւատի կանոնները, ցանկացել էին բաժանուել նրանցից: Նոր երկիր ժամանածները՝ կոչուել էին «Ուխտաւորներ», որոնք բնակութիւն էին հաստատել նոյն ովկիանոսի ափեր, որտեղ հիմա ամերիկեան Մասսաչուսեթս նահանգն է:

Իսկ ո՞վքեր էին իրենց «Ուխտաւոր» կոչած այդ մարդիկ: Արմինա-Հայաստան, իրենց անհատականութեամբ զօրաւոր մտքի մարդիկ, առաջարկել էին բարեփոխել Քրիստոնեայ եկեղեցու խստաբարոյ կանոնները: Ընդիմացաւ յետադեմ կղերականութիւնը, նրանց համար եկեղեցու կարգերը փոփոխութեան եթակայ չէին, որոնք հաստատուած էին Քրիստոնէական երեք տիեզերական ժողովների ընդունած որոշումներով: Հալածեցին նրանց, պատեցին, սպանեցին նրանց, իզուր էր նրանց համոզել դադարեցնելու իրենց բարեփոխիչ կանոնների քարոզները: Այն, Արմինա-Հայաստանում առաջադէմ մտքեր դաւանող՝ մ.թ. վեցերորդ դարի «Պաւլիկեան» անունով շարժումն էր: Նրա հիմնադիրն էր հայագրի Պաւղոս-Պօղոսը, որի անունով էլ շարժումը Պաւլիկեան կոչուել: Դաժան հալածանքների հետեւանքով, իրենց հազարհազար տարիների երկրից փախան... հասան Բիւզանդիա: Իմաստուն ու հաստատակամ բազմախումբ մարդիկ էին, նորէն սկսեցին քարոզել եկեղեցու կանոնների բարեփոխումների դրոյթների մասին: Ընդիմացաւ նաեւ յոյների Քաղկեդոնական եկեղեցին, երեւի Բիւզանդիոնի տի-

եզերական եկեղեցու պատրիարքի թեղադրանքով՝ քարոզեցին նրանց մինչեւ հեռու գերմանների երկիր: Նրանց բարեփոխիչ քարոզներին ծանոթացել էր Մարտին Լութեր անունով մի վանական: Պաւլիկեանների ազդեցութեամբ, տասնվեցերորդ դարի վերջին հրատարակած բանագրութիւնով (Tractate) բարեփոխել է երկեղեցու խստաբարոյ կանոնները, իր բողոքի համաձայն իրեն ու տեղի եկեղեցին անուանել էին՝ «Բողոքական»: Պաւլիկեանների յետնորդներ, յետոյ էլ տեղափոխուել են Ֆրանսիա ու Հոլանտիա, ապա Անգլիա: Իրենց դաւանանքի համար հալածուած մարդիկ, որպէս ուխտաւորներ հեռացել էին Անգլիայից՝ հանգրուանել նոր երկիր: Անգլիացի պատմաբանիպոնը գրել է՝ «Պաւլիկեան շարժումը ցնցեց արեւելքը եւ ուսուարեց արեւմուտքը»: Շարժման մանրամասնութիւնները առանձին յօդուածի նիւթ է:

Նոր երկրում իրենց բնակութեան առաջին ձմեռը դժուար էր եղել: Նրանք այնտեղ ժամանած էին եղել ուշ եղանակի, որպէսզի կարողանային նոր բերք աճեցնել: Առանց թարմ ուտելիքի, նոր գաղ-

թավայրում հաստատուած բնակիչների կէսը մահացել էին տարբեր հիւանդութիւններից: Յաջորդ գարնանը, «Արոգայգ» անուանուած տեղի հնդիկ բնակիչները նրանց սովորեցրել էին ինչպէս աճեցնել եգիպտացորեն, որը նոր ուտելիք էր գաղթականների համար: Նրանք եկուորներին ցոյց էին տուել անծանոթ երկրի հողում այլ տեսակի բոյսեր եւ աճեցնելու հնարաւորութիւնը, ինչպէս նաեւ որսորդութիւն ու ձկնորսութիւն անելու հմտութիւնները:

1621 թուականի աշնանը, եգիպտացորենի, գարիի, լոբազգիների եւ դդումների առատ բերքի հունձք էին հաւաքել: Գաղթականները, այդ եւ շատ ուրիշ հմտութիւններին վարժեցնելուն շնորհակալ լինելու համար, ծրագրել ին գոհաբանութեան ընթրիքի օոնախմբութիւն կազմակերպել: Հրաւիրել էին տեղաբնակ հնդիկ համայնքի ղեկավարին եւ իննսուս հնդիկների մասնակցելու կազմակերպուելիք խնճոյքին: Տեղաբնիկները, խորովելու համար իրենց հետ բերել էին եղջերու: Գաղթաբնակները նրանց հրամայել էին հնդկահաւերից, այլ վայրի երէններից ու իրենց աճեցրած բերքից պատրաստուած կերակուրներ: Գաղթականները, հնդիկներից սովորած էին եղել նաեւ ինչպէս պատրաստել «կրենբրի»-ից ու տարբեր տեսակների բոյսերից եւ եգիպտացորենից ուտելիքներ: Այդ առաջին գոհաբանութեան օրը՝ հնդիկները բերած էին եղել պայթող կորեկ (popcorn):

Յաջորդ տարիներին եւս գաղթաբնակներից շատերը աշնանային բերքահաւաքը օոնախմբել էին գոհաբանական խնճոյքներով: Ամերիկացի Միացեալ Նահանգները անկախ պետութիւն դառնալուց յետոյ, Ներկայացուցիչների Պալատը յանձնարարել էր իւրաքանչիւր տարուայ աշնանային բերքահաւաքի մէկ օրը՝ երկրի համար համարել գոհաբանութեան օոնակատարութեան օր: Այնուչետեւ, 1863 թուականին, երկար ու արիւնալի քաղաքացիական կռուի վերջին, նա-

խագահ Աբրահամ Լինքոլնը խնդրել էր Նոյեմբեր ամսուայ վերջին Հինգշաբթի օրը համարել գոհաբանութեան օոնակատարութեան օր:

ԳՈՒՀԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԵՐԸ

Հնդկահաւը, եգիպտացորենը, դդումը խորհրդանշում են առաջին գոհաբանութեան օրը: Այդ բոլոր խորհրդանշները այժմ օոնական ու ողջոյնի շնորհաւորական բացիկների վրայ են պատկերուած: Եգիպտացորենի օգտագործումը նշանակել էր Ամերիկեան ցամաքամասի գաղութների յարատեւութիւնը: Սեղանի կամ դռան «Հնդկական եգիպտացորենի» գարդարանքը ներկայացնում է բերքահաւաքը ու աշունը:

1988 թուականին, «Սենթ Ճօհն» տաճարում կատարուել է ուրիշ իմաստով գոհաբանութեան օոնախմբութիւն: Գոհաբանութեան այդ գիշերը աւելի քան չորս հազար հոգի հաւաքուել էին այդ տաճարում: Նրանց հետ էին եղել բնիկ ամերիկացի հնդիկների բոլոր համայնքների ներկայացուցիչները եւ յետնորդները այն մարդկանց, որոնց սակաւաթիւ ուխտաւոր գաղթական նախնիները երկիր էին ժամանած եղել: Այդ արարողութիւնը համաժողովրդական ճանաչումն էր՝ 350 տարիներ առաջ կատարուած գոհաբանական առաջին օոնախմբութեանը եւ ընդհանրապէս հնդիկների ունեցած դերակատարութեանն եւ նրանց ցուցաբերած աջակցութեանը: Մինչեւ վերջերը դպրոցական աշակերտներին հաւատացրել էին, որ միայն ուխտագնացներն էին պատրաստած եղել տեղացի հնդիկներին հրամցրած գոհաբանութեան խնճոյքի ուտելիքները, սակայն այդպէս չէր: Իրականում, գոհաբանութեան օոնակատարութեան առաջին խնճոյքը ծրագրուած էր եղել շնորհակալութիւն յայտնելու հնդիկ բնիկներին: Առանց հնդիկների աջակցութեան առաջին գաղթական ուխտաւորները պիտի չկարողանային յարատեւել:



MARTIAL ARTS - ORGANIZED by
GAIDZ YOUTH ORGANIZATION

SEVAK HAKOBYAN
4th dan

INTERNATIONAL MASTER OF MARTIAL ARTS
WORLD RECOGNIZED MEMBER OF ADAPTIVE SPORTS

- ❖ MARTIAL ARTS
- ❖ SELF-DEFENSE
- ❖ FOR MEN, WOMEN, CHILDREN & PEOPLE WITH DISABILITIES OF ALL AGES

WORLD RECOGNIZED INSTRUCTOR

- ❖ FREE for PEOPLE With DISABILITIES - GREAT RATES for FAMILIES & STUDENTS
- OFFICIAL OPENING is SCHEDULED on FRIDAY, DECEMBER 2, 2016, AT 5:30 PM
- ADDRESS: 1060 NORTH ALLEN AVENUE, PASADENA, CA 91104
- For registration and info text or leave message: 626-926-7224






FOLLOW US ON:

Instagram @Gaidzyo;

Gaidz Youth Organization;

@GaidzYouth

5 ԿԱՐԵՒՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ ՈՐԵՒԷ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՊԱՐԱԳԱՅԻՆ

Տղամարդու եւ կնոջ միջեւ յարաբերութիւնները կրնան շատ բարդ եւ խառն ըլլալ: Սակայն կան հանգամանքներ, որոնք համընդհանուր են որեւէ յարաբերութեան մէջ՝ ամուր հիմք կառուցելու համար:

Մշտական վստահութիւն-Ատրիկա չի նշանակեր, որ պէտք է կարգալ գոյգի հեռաձայնի հաղորդագրութիւնները, որպէսզի համոզուիք, որ ան չի խաբեր: Հակառակը, վստահիլ կը նշա նակէ նոյնիսկ պահանջ չզգալ աջգլխի բան ընելու:

Շփուելու կարողութիւն- Բոլորը գիտեն, որ շփումը կարեւոր ունակութիւն է ամուր յարաբերութիւններու կառուցման համար: Սակայն ըսելը աւելի դիւրին է, քան ընելը: Իրականութեան մէջ մենք մեր գոյգին կ'ակնկալենք հասկնալ մեզ առանց խօսքերու: Արդիւնքը կանխատեսելի է:

Հակամարտութիւններ լուծելու կարողութիւն- Երբ վէճ կը սկսի, պէտք է կարենալ իրավիճակը

կրն նայիլ գոյգի տեսանկիւ նէն: Ատրիկա ամենալաւ միջոցն է հասկնալու, թէ ի՞նչ կը զգայ ան, ինչէ՞ն դժգոհ է եւ, ամենազլխաւորը, ինչպէ՞ս գտնել փոխ գիշման եղանակ ու արագ դադարեցնել վէճը:

Անկախութիւն իրարմէ- Երբ կը գտնուիք յարաբերութիւն ներքու մէջ՝ դիւրին է կորսնցնել արտաքին աշխարհին հետ կապը եւ ամբողջ ժամանակը տրամադրել միայն ձեր գոյգին: Սակայն ուժեղ գոյգերը կը հասկնան իրարմէ հանգստանալու կարեւորութիւնը, այդ իսկ պատճառով, երբեմն կ'անցընեն իրարմէ անկախ ժամանակ:

Նման հետաքրքրութիւններ- Բարոյական եւ նիւթական արժէքները շատ կարեւոր են երկարաժամկէտ յարաբերութիւն ներքու համար եւ յաջող միութեան գրաւականն են: Բարոյական արժէքները կը բնորոշեն ձեր անձը, իսկ ընդհանուր նիւթական հետաքրքրութիւնները՝ կ'երաշխաւորեն այդ հողի վրայ վէճերու բացակայութիւնը:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԻՆՉՈ՞Ւ ԱՅԴՔԱՆ ԱՆԿԱՅՈՒՆ ԵՆ

Ժամանակակից յարաբերութիւններու մէջ շարժարաւէտութիւնը հանդէս կու գայ իբրեւ առաջնահերթութիւն: Մենք կրնանք ըլլալ մարդու հետ այնքան ժամանակ, քանի դեռ յարաբերութիւններուն մէջ կը գերակշռեն ներդաշնակութիւնն ու սէրը: Երբ բուն զգացումներուն փոխարինելու կու գան տարածայնութիւնները եւ վէճերը, մենք կը սկսինք հեռանալ իրարմէ:

1. Մենք բաւականաչափ պատրաստուած չենք: Յաճախ մենք պատրաստ չենք փոխ գիշման երթալ եւ սիրել՝ առանց պայմանականութիւններու:

2. Մենք սէրը կը շփոթենք այլ զգացումի հետ: Մենք կը փնտռենք արկածներ, զուարճալի իրավիճակներ, բայց պատրաստ չենք դժուարին պահերուն հասկնալու եւ աջակցելու մեր սիրելիին:

3. Մենք կը բախինք կենցաղային խնդիրներուն: Եւ ժամանակի ընթացքին մենք սիրոյ համար ժամանակ չենք ունենար: 4.

Մենք կ'ակնկալենք ստանալ ակնթարթային արդիւնքներ: Պէտք է յիշել, որ հասունութիւնը եւ փոխըմբռնումը կ'առաջանան տարիներու ընթացքին:

5. Մենք կը սիրենք փոփոխութիւններ: Մենք կը հանդիպինք շատերու հետ, բայց հնարաւորութիւն կու տանք միայն ընտրեալներուն:

6. Մենք կախեալ ենք ժամանակակից սարքերէն: Զայնային հաղորդագրութիւնները, նամակագրութիւնները եւ տեսազանգերը կը խլեն մեր ողջ ժամանակը:

7. Մենք յաճախ կ'ապաւինինք տրամաբանութեան: Զգա ցումները ետ մղուած են:

8. Մենք շատ կը վախնանք: Մենք կը վախնանք հրասթափութենէն եւ կը փորձենք պաշտպանուիլ մարդոցմէ՝ անտեսանելի պատանշի միջոցով:

9. Մենք ձեռք բերած ենք «սեռական ազատութիւն»: Երիտասարդները սկսած են առանձնացնել «սեքս»ը՝ «սէր»էն:

ՍՈՐԿԻԼ ԶՅԵՏԱԶԳԵԼ ԳՈՐԾԵՐԸ

Եթէ դուք կը տառապիք կարեւոր գործերը մշտապէս յետաձգելու հիւանդութենէն եւ նոյնիսկ կրցած էք այդ պատճառով կուտակել շարք մը խնդիրներ, ուրեմն ժամանակն է հետեւելու այս խորհուրդներուն:

Մի աշխատիք ճնշման տակ: Ատրենալինը, որ կը նպաստէ վերջնաժամկէտի նախօրէին արագ աւարտել գործը, ձեզ կը ստիպէ ոչ արդիւնաւէտ կատարել աշխատանքը:

Իւրաքանչիւր կէս ժամը մէկ անգամ դադար առէք: Փորձեցէք աշխատիլ 25 վայրկեանի ընթացքին, այնուհետեւ 5 վայրկեան դադար առնել: Այդպէս ընելով՝ աշխատանք կատարելը ձեզի յաւերժութիւն պիտի չթուի:

Ամենադժուար աշխատանքը կատարեցէք առաջին հերթին: Ամենադժուար աշխատանքը կատարելէ ետք՝ դուք պիտի ստանաք անհաւանական ազդակ, որ ձեզի պիտի

օգնէ հեշտութեամբ լուծելու մնացած հարցերը:

Ձեզի համար ուսուցիչ գտէք: Եւ թող ան կանոնաւոր կերպով վերահսկէ, թէ դուք ինչպէս կը կատարէք ձեր աշխատանքը:

Մի կարծէք, որ կ'աշխատիք բարդացած եղանակով: Մտածելով, որ բազում խնդիրներ ունիք լուծելու, դուք կ'իստապաւանակուիք կատարել այն գործերը, որոնք ձեզմէ կը պահանջեն ամբողջական կեդրոնացում:

Յիշեցուցէք դուք ձեզի, թէ որքան հաւաքող է կիսատ ձգել գործերը: Դուք կը պատկերացնէք, թէ ինչ պիտի ըլլայ, եթէ չկարենաք կատարել ծրագրաւորուած գործերը: Որքան վատ պիտի զգաք: Յաճախ մտածեցէք այդ մասին:

Նախապէս կազմեցէք գործերու ցուցակ: Գործերու ծրագրաւորումը պիտի օգնէ աւելի արդիւնաւէտ ըլլալ: Առաւել եւս, եթէ ամէն

5 «ՕԳՏԱԿԱՐ- ՄԹԵՐՔ, ՈՐՈՆՔ ԿԸ ԽԱՆԳԱՐԵՆ ՆԻՉԱՐՆԱԼՈՒՆ

Այսօր կան բազմաթիւ մթերքներ, որոնք, իբր, կ'օգնեն նի հարնալու: Անոնցմէ շատերը իրականութեան մէջ այնքան ալ օգտակար չեն, որքան կը ներկայացուին: Աւելին, անոնք ոչ միայն չեն օգնել նիհարնալու, այլեւ՝ կը խանգարեն: Այսպէս, անոնք, որոնք նիհարնալու ցանկութիւն ունին՝ պէտք է բացառեն իրենց աննդակարգէն. 1.Անիւղ կաթը: Անիւղ կաթին մէջ աւելի քիչ վիթամիններ եւ հանքանիւթեր կան, այսինքն՝ պակաս օգտակար են: A, D, E եւ K վիթամինները կը լուծեն ճարպը, անոնց իւրացման համար անհրաժեշտ են ճարպեր: Աւելին, անիւղ կաթ օգտագործելէ յետոյ քաղցի զգացողութիւնը կ'աւելնայ:

2.Սրճագոյն կամ սեւ հաց: Շուկային մէջ առկայ սեւ հացի բազմաթիւ տեսակներ ունին մեծ քանակով շաքար: Բացի այդ, սեւ հացին մէջ նոյն քանակով վերամշակուած ալիւր կայ, որ քան ճերմակ հացին մէջ, որ կը մեծցնէ անոր գլիկեմիկին տեքստը:

3.Նիհարնալու-փաթիլներ: Փաթիլներուն մեծ մասը ունին մեծ քանակով շաքար եւ արհեստական ներկանիւթեր, ինչպէս նաեւ քիմիական քաղցրացուցիչներ, որոնք վնասակար են առողջութեան համար: Խոստովեցէք իբր «խսկական միրգեր» պարունակող փաթիլներէն. սովորաբար անոնք ընդամէնը արհեստական բուրբաւտիչներ են: Փոխարէնը օգտագործեցէք ջուրով կամ կաթով պատրաստուած սովորական վարսակի փաթիլ: 4.Ուժտուող կարկանդակներ: Պէտք է վստահիլ ուժտուող կարկանդակներու գեղեցիկ փաթեթաւորման կամ առողջութեան համար անոնց օգտակարութեան մասին արտադրողներու պնդումներուն: Այդ կարկանդակներուն մեծ մասը կը պատրաստուի ցորենի ալիւրով, շաքարով եւ ճարպերով: 5.Բեկաբլիթներ: Ասոնք օրկանիզմին կ'օգնեն լրացուցիչ քանակով ինսուլին արտադրել, բայց կրնան նաեւ նուազեցնել արեան մէջ շաքարին մակարակը, որ կ'առաջացնէ անօթութեան զգացում:

ԻՆՉՊԵՍ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼ ԿԵՆՍՈՒՐԱԽՈՒԹԻՒՆԸ

Գործեր, հոգեր, կենցաղային խնդիրներ...Մենք միշտ կը ձգտինք կատարեալին՝ ըլլալ կատարեալ մայր, կատարեալ կին, կատարեալ աշխատակից, կը փորձենք արդարացնել ունէ մէկուն սպասումները՝ մոռնալով սակայն ուրախանալ կեանքով: Աստիճանաբար զգացողութիւնը, որ կեանքը հրաքանչէ՝ կը կորսուի, վառ գոյները կը մարին եւ կը մնան անգոյն ձանձրալի օրերը:

Արդեօք կը յիշէ՞ք, թէ վերջին անգամ ե՞րբ կը քայլիք առաւօտեան եւ կ'ուրախանայիք միայն անոր համար, որ առաւօտ է եւ կապ չունէր արեւոտ է, թէ անձրեւոտ: Երբ կը ժպտայիք հայելիին նայելով եւ ունէիք բարձր տրամադրութիւն: Վերադարձնել կենսուրախութիւնը հնարաւոր է, հետեւելով այս հասարակ 7 կանոններուն: Այսպէս.

1.Թոյլ տուէք դուք ձեզ լաւ զգալ, թոյլ տուէք դուք ձեզ հանգստանալ, առանց խցի խայթի: Օրական կէս ժամ դուք ձեզի տրամադրելը չի նշանակեր, որ դուք եսասէր էք, վատ մայր կամ վատ տնային տնտեսուհի: Մի յետաձգէք հաճոյքը, երբ «ամէն ինչ եղած է»:

2.Հետազօտեցէք դուք ձեզ: Պարզեցէք, թէ այս կեանքին մէջ ի՞նչն է, որ ձեզի հաճոյք կը պատճառէ եւ դրական լիցքեր կը հաղորդէ: Եթէ կը սիրէք երաժշտութիւն, միացուցէք զայն բարձր, երգեցէք: Եթէ կը սիրէք այլ հաճոյքներ, այցելեցէք մերսուներու, դիմակներ քսեցէք, լոգանքներ ընդունեցէք՝ բազմաթիւ բուրբաւտ փրփուրներով: Զբաղեցէք երկա-

յով, հեծանիւ վարեցէք: Եթէ պարզուի, որ դուք ստեղծագործել կը սիրէք, սկսեցէք իրագործել ձեր գաղափարները: Այս ցուցակը կարելի է անդադար շարունակել, պարզեցէք ձեզի համար, ինչը կ'ուրախացնէ ձեզ եւ գործեցէք:

3.Այդ ժամանակ դուք ձեզ ամբողջութեամբ տրամադրեցէք ընտրուած գործին, առանց մտածելու խնդիրներու մասին: Անոնց մասին դուք կը մտածէք յետոյ:

4.Դարձէք հետաքրքրասէր: Մի ամէնաք կոտրել գործերու սովորական ընթացքը եւ թոյլ տուէք ձեզ այն, ինչի մասին շատոնց կ'երագիչիք, սակայն մինչեւ այժմ կ'ամէնայիք ընել: Փոփոխութիւնները ձեր կեանքը աւելի հետաքրքրական պիտի դարձնեն:

5.Քննալիք առաջ յիշեցէք անցած օրուան լաւ պահերը եւ շնորհակալութիւն յայտնեցէք դուք ձեզ՝ ատոնց համար:

6.Փորձեցէք դրական մտածել: Կրկնեցէք դուք ձեզի, որ դուք լաւ էք այնպէս, ինչպէս որ էք եւ ձեզ շրջապատող մարդիկ նոյնպէս հաճելի են ու լաւ:

7.Յիշեցէք՝ կենսուրախութիւնը այն զգացողութիւնը է, որ կարելի է պահեստաւորել եւ անիկա ընդմիշտ պիտի մնայ: Անիկա անկախ է արտաքին դրսեւորումներէն եւ անոնցմէ, թէ ինչ կը կատարուի ձեր կողքին: Կեանքով ուրախանալու համար պարտադիր չէ ունենալ դրամով լի պայուսակ կամ աղամանդ ներ, այլ նիւթական իրեր: Դուք ունիք անվերապահ իրաւունք՝ ուրախացնելու դուք ձեզ եւ ուրախանալ այս կեանքով՝ անկախ որեւէ բանէ, իսկ երբեմն, նոյնիսկ, ի հեճուկս:

մէկուն համար վերջնաժամկէտ նշանակէք:

Պատկերացուցէք ամենավատ ընթացքը: Մտածեցէք, թէ իրականութեան մէջ ինչ տեղի պիտի ունենայ, եթէ դուք փճացնէք գործը: Ղեկավարի դժգոհութիւնը, գործընկերներու անբարեհաջակ մոտեցումները եւ զղջալու զգացողութիւնը:

Մտածեցէք արժանի պարգեւ: Ծաշի մտերիմ գործընկերով հետ, հանդիպում ընկերներու հետ, այցելութիւն թատրոն:

Ընդունեցէք այն փաստը, որ դուք պէտք է ընէք այդ գործը: Երբեմն դուք ուղղակի չէք գիտակցիր ձեր ամբողջ պատասխանատուութեան: Ըրէք այն, ինչ որ պէտք է ընէք:

ԱՍՏՂԵՐԸ Ի՞ՆՉ Կ'ԸՍԵՆ

ԽՈՅ **Մարտ 21-Ապրիլ 19**
 Ձարմանք պատճառող խօսքեր կը խօսիս, սակայն մտքիդ մեջիցը չես պարզեր: Նիւթական մուկը մը խոստացած ես եւ պէտք է կատարես գայն: Աշխատիլ շատ սիրելուդ՝ դժուարութիւն պիտի ունենաս գործէ կենալու եւ հանգիստ ընելու:
 Բախտաւոր թիւերդ են: 11,19,24,30,31

ՅՈՒԼ **Մայիս 20-Յունիս 20**
 Փոխանակ յուսահատելով տունը մնալու՝ կարողութեանդ համեմատ փորձէ դուն քեզ զբաղ պահել: Հակառակ ունեցած սահմանափակումներուդ՝ տակաւին կարող ես կատարել քեզի տրուած պարտականութիւններդ:
 Բախտաւոր թիւերդ են: 1,8,12,25,31

ԵՐԿՈՒՌՈՐԵԱԿ **Յունիս 21-Յուլիս 20**
 Սովորութիւն դարձուցած ես նկատի չ'առնել շուրջիցներդ երբ հաւաքի մը ներկայ գտնուիս: Գործատեղիիդ մէջ մեծ նուիրումով եւ եռանդով կ'աշխատիս, գոհ ձգելով բոլորը: Կառավարական գործ մը պիտի ստիպուիս ընել:
 Բախտաւոր թիւերդ են: 6,14,27,28,32

ԽԵՑԳԵՏԻՆ **Յունիս 21-Յուլիս 22**
 Մեծ փափաք ունիս ճանջուելու, յատկապէս գործատիրոջդ կողմէ: Անձի մը պիտի ծանօթանաս որը ապագային շատ մտերիմ բարեկամ մը պիտի ըլլայ քեզի: Բոլոր ուզածներուդ չես կրնար տիրանալ ամէն օր:
 Բախտաւոր թիւերդ են: 14,24,26,29,33

ԱՌԻԺ **Յուլիս 23-Օգոստոս 22**
 Գիտակից եղիր տկարութիւններուդ եւ զգուշացիր չգիտցած միւթիդ մասնակցելէ հանրային տեղերու մէջ: Իմաստութեամբ զանազան տուեալներդ: Խօսքերուդ համաձայն ըրէ գործերդ որպէսզի սուտ չ'ելլես յետոյ:
 Բախտաւոր թիւերդ են: 3,16,25,31,32

ԿՈՅՍ **Օգոստոս 23-Սեպտեմբեր 22**
 Ընտանիքիդ հանդէպ ունեցած սերդ նախապատուութիւն պէտք է ըլլայ առօրեայ կեանքիդ մէջ: Փորձանքի մը հանդիպելով՝ կեանքի նկատմամբ ունեցած տեսողութիւնդ պիտի փոխես: Նոր գործի առաջարկ մը պիտի ունենաս:
 Բախտաւոր թիւերդ են: 8,13,20,21,28

ԿՇԻՈՔ **Սեպտեմբեր 23-Հոկտեմբեր 22**
 Ըրած սխալներուդ լրջութիւնը բնաւ չ'սթափեցներ քեզ դադրելու եւ հանդարտօրէն մտածելու: Քեզմէ տարեցները երբէք չես ուզեր անարգել եւ շատ յարգալիք ես: Ընտանիքիդ անդամները շատ կը սիրեն քեզ եւ կախեալ են քեզմէ:
 Բախտաւոր թիւերդ են: 7,12,26,31,32

ԿԱՐԻՃ **Հոկտեմբեր 23-Նոյեմբեր 21**
 Շատ յատկանշական ձեւ մը ունիս նեղութեան պարագային ինքզինքդ հանդարտեցնելու: Կեղծաւորութիւնը մէկդի ձգելու ես որովհետեւ մարդիկ շատ լաւ սկսած են ճանչնալ քեզ: Գնահատել ուրիշները պէտք է առօրեայիդ մէկ մասը ըլլայ:
 Բախտաւոր թիւերդ են: 18,21,25,29,33

ԱՂԵՂՆԱԲՈՐ Նոյեմբեր 22-Դեկտեմբեր 21
 Երեւոյթներ երբէք քեզ չեն խաբեր, քանի որ լաւ գիտես իրողութիւնները: Կեցուածքդ, զգացումներդ եւ արտայայտութիւններդ շատ բան կ'ըսեն քու մասիդ ու հաւատարմութեամբ կը հետեւիս օրէնքներու:
 Բախտաւոր թիւերդ են: 3,13,17,23,35

ԱՅԾԵՂՋԻՐ **Դեկտեմբեր 22-Յունուար 19**
 Այնքան վստահութիւն ունիս դուն քու վրադ՝ որ կը մերժես ոեւէ ցուցմունք: Կ'ուզես առանձնութեան վայրկեաններ գտնել ինքզինքիդ համար, բայց այդ օր ըստ օր կը դժուարանայ, զբաղ կեանքիդ արդիւնքով: Համբերող եղիդ կողակիցիդ նկատմամբ:
 Բախտաւոր թիւերդ են: 4,12,23,34,35

ԾՈՎԱՆՈՅՇ **Յունուար 20-Փետրուար 19**
 Շատ ատեն կը նախատես առանձին ձգուիլ մտածումներուդ մէջ եւ հարցերդ լուծել լռութեամբ: Ընդունելու ես անձի մը բարեկամութեան հրաւերը որը սիրով եւ զոհաբերութեամբ կը մօտենայ քեզի: Լաւ շաբաթավերջ մը պիտի ունենաս:
 Բախտաւոր թիւերդ են: 7,11,20,26,31

ՉՈՒԿ **Փետրուար 20-Մարտ 20**
 Գործիդ մէջ ունեցած հեղինակութիւնդ մի օգտագործեր անձնական շահերուդ համար: Ազգականներդ յարգէ եւ անոնց մի ցուցներ արարքներովդ: Ուրիշներու ծախողութիւնները տեսնելով՝ դուն քեզ լաւ կը զգաս:
 Բախտաւոր թիւերդ են: 5,14,21,28,30

ՄԱԵՍՏՐՈ ՅԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

Շարունակուած էջ 13-էն

Կայն Հենրիկ Անասեանի «Մեծ լուեցու անմեռ հմայքը» խորագրով յօդուածը բացառիկ է: Յաւալի է, որ աճող սերնդի առանձին ներկայացուցիչներ, ինչպէս ցաւով նշում է հեղինակը, Թումանեանի արձանի դիմաց կանգնած՝ չեն իմանում, թէ ո՞վ է քանդակուած: Անասեանը տեղին է շեշտում, որ «Անուշ»ը ժողովրդի երեւակայութեան մէջ իրար է միացրել Յովհ. Թումանեանի եւ Արմէն Տիգրանեանի անուններն ու հանճարը: Յովհ. Թումանեանը Ամենայն Հայոց Բանաստեղծն է անվիճելիօրէն... «Մեզ մնում է միայն,- գրում է Անասեանը,- բոլոր միջոցներով գալիք սերունդներին փոխանցել մեծ լուեցու հմայիչ ու գերող գրականութեան բոլորը»:

Գրքի տարբեր բաժիններում Անասեանը վերստին ու կրկին անդրադառնում է մայրենիին, լեզուի հարցին: «Ժամանակութեան մեծագոյն գանձը մեր լեզուն է» խորագրով յօդուածը նուիրուած է հայագիտութեան նուիրեալ Յովսէփ Նալպանտեանի նոր գրքին (այդ նորը նախորդում է նորագոյնին):

Մեր խօսքի վերջում անդրադառնալով նաեւ Արամ Խաչատրեանի վերաբերեալ եղած նիւթերին: Դրանք երկու բնույթի են. Ա. Քննադատական յօդուածներ, Բ. Յօդուածներ՝ համերգների վերաբերեալ: Ի թիւս այս յօդուածների, ներկայացուած են նաեւ այլ հեղինակների առանձին գրութիւններ՝ անհրաժեշտ մասնակի կրճատումներով:

Երաժշտագէտները, եւ ոչ միայն նրանք, շատ ուսանելի նիւթ կը գտնեն ԵՐԱԺՇՏԱ-ԳԻՏԱԿԱՆ, ԵՐԱԺԻՇՏՆԵՐ բաժնում:

«Թուրքը եղել է, կայ եւ մնում է թուրք» յօդուածի վերնագիրն արդէն շեշտում է իրողութիւնը, թուրքին տրուելիք անփոփոխ գնահատականը:

«Մեծ Եղեռնի հետ կապուած նիւթեր» բաժնում կայ Անասեանի խորհրդանշական տողերից մէկը. «Թուրքը մեծ չէ, շատ է...», իսկ ՇԱՏը որակի չափանիշ է: Ինչպէս Սեւակը կ'ասէր. «Մենք քիչ ենք,

սակայն մեզ հայ են ասում...»: Իսկ հայը,- շարունակում է իր մտորումը Անասեանը,- մեծ է՝ իր մեծերով, իր խելքով, իր գիտութեամբ, իր դարերի պատմութեամբ, իր մշակոյթով:

Մեր անուանի ժամանակակիցը, մաստրօ Հենրիկ Անասեանը իր այս՝ «Այս եմ ես...» շարքի ճիշտ հատորով եւս վկայում է, որ ինքը ոչ միայն երաժշտագիտութեամբ, խմբավարական մշակոյթով առանձնացող անձնաւորութիւն է, այլեւ իր արձակով, գրական ստեղծագործութիւններով վաստակ ունեցող կերպար:

Նրա մեկնաբանութիւնները անկեղծ են, ճշմարիտ եւ ՀԱՅԱԿԵՐՏԻՉ՝ ազնիւ ու անկաշառ մղումներով:

Ամբողջ հատորը, նախորդ հատորների հետ միասին, ներկայացնում է Հենրիկ Անասեանին հենց իր վերնագրով՝ «Այս եմ ես...»: Այս է. իրապէս ՄԱԵՍՏՐՈՆ, մեզ քաջ ծանօթ Հենրիկ Անասեանը:

Պահն է ամփոփելու մեր խօսքը: Անկեղծ շնորհաւորանքներ մեր մաստրոյին՝ այս հատորը եւս ընթերցող լայն գանգուածներին պարգեւելու համար:

Վստահ եղէք, որ սա վերջինը չէ... Նա դեռ շատ բան ունի հանրութեանը ասելու, գրելու: Սպասելով Հենրիկ Անասեանի յաջորդական հատորներին՝ հաւատում ենք, որ Մեծն Նախախնամութիւնը տակաւին շատ ու շատ երկար ժամանակ ունի հնչեցնելու իր ՎԵՐՁԻՆ ԶԱՆԳԸ:

Շատ կանուխ է այդ մասին խօսք բացելն անգամ: Ասել են ՍՈՅԼԵՄԵՉԵԱՆ-ԱՆԱՍԵԱՆ... սակայն այնքան բան կա Հայոց այս խարհին մատուցելու. Հենրիկ Անասեանը իր յիշողութիւնների հսկայական տարածքում ունի բազում թաքուն էջեր...

Հայաստան աշխարհը, Սփիւռքը իր բոլոր գաղթօճախներով պայպիսի գրականութեան կարօտ է, նման հատորների պահանջ զգացել է, զգում է եւ միշտ պիտի զգայ:

Մեզ մնում է հեղինակին յայտնելով մեր երախտագիտութիւնը՝ ասել պարտն ու պատշաճը:

-Վարձքդ կատար մաստրօ...

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՅՐ ԹԵՐԵԶԱՆ

Շարունակուած էջ 15-էն

րով: Կեդրոնի աշխատանքը նիւթականի կողքին կը կեդրոնանայ ընկերային պայմաններէն եւ գրկանքէն կեանքի դէմ անոնց ունեցած ժխտական կեցուածքը փոխարինել գրականով, զօրացնել անոնց հաւատքը հանդէպ Աստուծոյ եւ հանդէպ իր նմանին մարդուն. «Աստուած բոլորս ստեղծած է սիրով եւ Ան կը սիրէ մեզի եւ մենք պէտք է փոխանձենք այդ սէրը իրարու որպէսզի սիրոյ մթնոլորտի մէջ ապրին այդ մանուկները եւ ստեղծագործեն»: Կ'ըսէ քոյր Արուսեակ:

Որպէս վերջին պատգամ երբ Քոյր Արուսեակի կը հարցնեմ ան անմիջապէս կը պատասխանէ «...Երկու փափաք ունիմ. ա. Հայաստանի ապագան մեր այսօրուան երիտասարդներն են պէտք է մեծ սիրով գուրգուրանք անոնց վրայ դաստիարակենք եւ գիտութեամբ զինենք զանոնք, որպէսզի կարենանք հայրենիքի ապագան ապահովել:

բ. Հայաստանի երիտասարդները, որոնք առիթը կ'ունենան արտասահմանի մէջ պատրաստուե-

լու, գանազան ճիւղերու մէջ, խնդրանքս է, որ վերադառնան հայրենիք որպէսզի իրենց գիտելիքներով զարգացնեն հայրենիքը եւ հօրացնեն անոր անտեսութիւնը»:

Ես լուռ կը հետեւիմ Քոյր Արուսեակի խօսակցութեան, վճռակամութիւն կայ հոն այդքան հանդարտութիւն եւ հաստատամտութիւն իր տուած մտքերուն եւ գաղափարներուն ընդերքը: Անոր գործի հանդէպ ունեցած հաւատքը վերածուած էր հայրենիքի ու հայ պատանիի հանդէպ պաշտամունքի, որ զինք կը մղէր ստեղծագործելու եւ քարը տուն դարձնելու եւ տունը հայրենի երդիք հայ որբուկին ու պատանիին:

Կը խոնարհինք քու խոնարհութեանդ եւ աշխատանքիդ մեծութեան առջ սիրելի Քոյր Արուսեակ, Հայաստանի որբուկներու Մա'յր, քու դաստիարակած սաներդ վաղը՝ հայրեր ու մայրեր, պիտի քալեն քու ուղիովդ, դաստիարակելով նորանոր սերունդներ, որոնք հայրենիքը պիտի կառուցեն հաստատ հիմերու վրայ Քրիստոնէական հաւատքով ու հայրենիքի սիրով:

ՀՈԳԵՅԱՆԳԻՍ



ՄԱՐԹԻՆ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

ՄԱՐԹԻՆ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ մահուան քառասունքին առթիւ, Կիրակի 4 Դեկտեմբեր, 2016ին առաւօտեան ժամը 10:30ին այցելութիւն պիտի տրուի հանգուցեալի շիրիմին, Hollywood Hills Forest Lawn գերեզմանատան մէջ:

Ապա հոգեճաշ պիտի մատուցուի Verdugo ճաշարանին մէջ, 400 West Glenoaks Blvd, Glendale CA 91202:

- Սգակիրներ՝ Այրին՝ Տիկ. Աստղիկ Խաչատուրեան
- Զաւակը՝ Տէր եւ Տիկ. Անդրանիկ եւ Մելինտա Խաչատուրեան եւ զաւակները
- Դուստրը՝ Տէր եւ Տիկ. Արամ եւ Անի Անանեան եւ զաւակները
- Դուստրը՝ Ռիթա Խաչատուրեան
- Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Ռաֆֆի եւ Զեփիլու Խաչատուրեան եւ ընտանիք
- Քոյրը՝ տէր եւ Տիկ. Արդօ եւ Հուրիսիմէ Գազանճեան եւ զաւակները
- Եղբոր զաւակները՝ Անդրանիկ եւ Ճինիֆեր Խաչատուրեան:
- Տէր եւ Տիկ. Ֆիլիպ եւ Ալիս Բալուլեան:
- Եւ համայն Խաչատուրեան, Բալուլեան, Մարտիրոսեան, Պոյաճեան, Մոմճեան, Ճարրգեան, Եսայեան, Գազանճեան, Անանեան եւ Սղեփոս ընտանիքները, ընկերները եւ բարեկամները:

ՑԱԲԱԿՑԱԿԱՆ

ԱՆՌՈՒԱՆ ԳԱՐԱՄԱՆԼԵԱՆԻ անակնկալ մահուան տխուր առիթով «Մասիս»-ի խմբագրութիւնն ու աշխատակազմը իրենց խորագգաց վշտակցութիւնները կը յայտնեն հայ մամուլի եւ մշակոյթի ծանօթ գործիչի ընտանեկան համայն պարագաներուն:

ԴԻԱՐԲԵՔԻՐԻ ԻՍԼԱՄԱՑԱԾ ՀԱՅԵՐԻ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԶԱՐԹՕՆԵՐ

Շարունակուած էջ 14-էն

Են: Ընդհարումների եւ փողոց դուրս գալու արգելքի պատճառով մինչեւ վերջերս եկեղեցի մուտք գործելն անգամ հնարաւոր չէր: Կարող էր ասել՝ ներկայումս այն ինչ վիճակում է:

Անցեալ տարուայ Օգոստոսից ի վեր այնտեղ կանոնաւոր մուտք չենք ունեցել, ոչ էլ կարողացել ենք աշխատանքներ կատարել: Վերջին անգամ՝ 2015թ Օգոստոսի 15-ին մի ծրագիր էինք նախատեսել, դատեղի չունեցաւ: Իրադարձութիւնների բերմամբ, ծրագրի արտերկրեայ մասնակիցները չկարողացան ժամանել, մենք էլ չեղեալ յայտարարեցինք: Դրանից յետոյ տարածաշրջանում տիրող իրավիճակից ելնելով չկարողացանք որեւէ գործունէութիւն ծաւալել: Խօսքը մի շրջանի մասին է, ուր երկար ժամանակ պարետային ժամ էր գործում, իսկ Սուրբ Կիրակոսը այդ շրջանի հենց կեդրոնում է գտնուում: Ես, օրինակ, միայն 6 ամիս անց կարողացայ մուտք գործել եկեղեցի: Ի հարկէ, այնտեղ տիրող իրավիճակը շատ լուրջ էր: Քաղաքը ջարդուփշուր են արել՝ փողոց չի մնացել, թաղամաս չի մնացել: Ամէն ինչ աւերուել է՝ տները, խանութները...: Միայն հարթ տարածք է մնացել: Քանդուել են եկեղեցուն պատկանող խանութները: Եկեղեցու պատերը, տանիքը, զանգակատունը լուրջ վնասներ չեն կրել: միայն մի պատի վրայ մեծ անցք է բացուել: Սակայն մեծապէս վնասուել է ներսի մասը: Թալանուել է նուէրների վաճառ-

քին յատկացուած տարածքը: Զարդուել կամ կողոպտուել են եկեղեցու մէջի իրերն ու պարագաները: Եկեղեցու ներսը օգտագործուել է որպէս ռազմակայան, այնտեղ վառարան են սարքել:

Անվտանգութեան ուժերի կողմից է եկեղեցին որպէս ռազմակայան օգտագործուել:

Հաւանաբար այդ, բայց ով է օգտագործել, ով է աւերել, անհնար է իմանալ: Ներկայ պահին այն ամբողջովին անվտանգութեան ուժերի վերահսկողութեան տակ է: Ներկայ պահին հնարաւոր է արդեօք եկեղեցի մուտք գործել:

Դեռեւս հնարաւոր չէ, մենք յատուկ թոյլտուութեամբ կարողացանք մտնել:

Թաղամասի ոչնչացումն ինչպիսի՞ զգացողութիւն է առաջացնում ձեր մէջ:

Յօշոտուած լինելու զգացումն ենք ապրում: Հարիւր տարի առաջ այս թաղը հայաբնակ էր՝ միգրացի 95 տոկոսով հայերով բնակեցուած մի վայր էր: Եկեղեցու վերականգնումով՝ այդ կենսակերպը չի շողովութիւններից կրկին վերադառնում էր մեր գիտակցութեան մէջ: Ներկայ պահին, ցաւօք, ոչինչ չունենք: Եկեղեցին կանգուն է, բայց քանդուած բոլոր տները հայկական քարէ տներ էին: Մկրտիչ Մարկոսեանը այս թաղի հետ կապուած «Գեաւուրի թաղ» վերնագրով մի ստեղծագործութիւն ունի: Մեր ընկերներից մէկը այս դէպքերից յետոյ կատակելով ասում էր. «Գեաւուրը գնացել, թաղը մնացել է»: Գեաւուրի թաղում գեաւուր չէր մնացել, հիմա թաղամասն էլ չմնաց: Հարիւր տարի առաջ

մարդկանց ոչնչացրին, հիմա նրանց բնակած վայրերն էլ ոչնչացան:

Սուրի շրջանի, այդ թուով նաեւ հայկական Սուրբ Կիրակոս եկեղեցու, պետականացման վերաբերեալ անցեալ Մարտի որոշման հարցում որեւէ զարգացում կա՞ր արդեօք:

Պետականացման որոշումը չեղեալ համարելու համար բոլոր տեսակի դիմումները ներկայացուած են դատարան: Տարբեր հաստատութիւններ արդէն դատարան են դիմել, մեր հիմնադրամն էլ է հայց ներկայացրել: Այս պահի դրութեամբ դատական գործընթացը շարունակուած է: Դեռ փաստացի ոչինչ արուած չէ. ինչպէս կայ, այդպէս էլ մնում է: Իրականում, թաղամասում բան չի մնացել, ինչ կը կառուցեն դրա տեղը, չգիտենք: Դիարբեքիր այցելելիս նախարարներն ու բարձրաստիճան պաշտօնեաները բանաւոր յայտարարեցին, որ թաղամասը վերականգնուելու է, ոչ ոք չի տուժելու: Բանաւոր կերպով ասուեց, որ եկեղեցին չի օտարացելու: Դիարբեքիր այցելելիս վարչապետն ու նախարարները ասում են, որ «պաշտամունքային կառուցները չեն կարող բռնագրաւուել, չենք պետականացնելու»:

Բայց դրանք բանաւոր ասուած խօսքեր են, հարկադիր բնոյթ չեն կրում, այդպէս չէ՞:

Անշուշտ, իրաւական առումով վիճակը պարզ է. այն անյապաղ օտարման գործընթացով բռնագրաւուած է:

Քիչ առաջ խօսում էիք մի շարք մարդկանց կողմից բռնագրաւուած, իսկ այժմ գետնին հաւասարեցուած խանութների մասին, որոնք եկեղեցու սեփականութիւնն են: Դուք մտադիր էիք դրանք հետ բերել, սակայն քանի որ դրանք այլեւս գոյութիւն չունեն, այդ մասին մտածելն անգամ արեւորդ է, այդպէս չէ՞:

Այդ կալուածքներն արդէն բռնագրաւութեամբ էին: Հետ վերցնելու բան էլ չմնաց այլեւս: Այնպէս եղաւ, որ ներկայումս այդ հողատարածքը պետական սեփականութիւն դարձաւ: Իշխանութիւնների խօսքով՝ այս հարցում տուժողներ չեն լինելու: Բայց ինչ է լինելու, դեռեւս չգիտենք:

Խօսեցինք հայ ինքնութեանը վերադառնալ ցանկացողների ակնկալիքներից: Ինչպիսի՞ դժուարութիւններ են բախուում, օրինակ, մկրտուել ցանկացողները:

Հարկաւոր է լինում հետեւել Պատրիարքարանի պահանջած որոշակի ընթացակարգերի եւ ծիսակարգերի: Վեցամսեայ ուսուցման մի գործընթաց կայ: Հայաստանում կաթողիկոսութեանը դիմելով երկու մկրտութիւն իրականացրինք: Պատրիարքութիւնը որոշակի կանոններ ունի «Առանց մեր գիտութեան ոչ

ոք պէտք չունի Հայաստան գնալ՝ մկրտուելու», - ասում են նրանք: Նրանք ասում են՝ «Եթէ կարիք լինի, մենք այստեղ հարկ եղածը կ'անենք»: Նման ցանկութիւն ունեցող անձը նախ եւ առաջ պէտք է գնայ իր անձնագրում «խլամ» ձեւակերպումը փոխի «քրիստոնեայ»-ով: Անցեալում դա արուած էր դատական կարգով, հիմա արդէն անձնագրային վարչութիւնում է արուած: Այս կանոններն էլ բնական են: Պատրիարքարանը ասում է՝ «Ես ինչո՞ւ պիտի մկրտեմ անծանօթ մարդուն, որը գուցէ եւ քրիստոնեայ չէ»: Այդ տեսակէտից նա իրաւացի է: Սակայն միւս կողմից, նման ցանկութիւն յայտնող մարդիկ երբեմն արդէն չորս սերունդ է իսլամացուած են եւ նրանց հայկական ծագումը բոլորին յայտնի է: Դիմելու դէպքում՝ հայկական արմատներին վերադառնալ ցանկացողները որոշակի ընթացակարգից յետոյ կարողանում են այդ անել:

Կրօնի մասնաւոր ոլորտում մնալու անհնարինութիւնը՝ ցեղաշարունակ արդեօք խնդիրը: Թուրքիայում ոչ ոք չի կարողանում ասել՝ «Անճագրում կրօնս չփոխեմ, բայց անձնականում քրիստոնեայ լինեմ»:

Անցեալում ինքնութեան քարտու կրօնի դիմաց «հայ» կամ «ասորի» էր նշում: Հիմա դա էլ վերացաւ, պարզապէս «քրիստոնեայ» է գրուած: Պատրիարքարանը իր տեսակէտից իրաւացի է, բայց հարիւր տարի իրենց ինքնութիւնից կտրուած մարդկանց համար դա բաւական ծանր գործընթաց է:

Եթէ կարողանաք կրկին մուտք գործել եկեղեցի եւ վերսկսել ձեր գործունէութիւնը, մտադիր էք կազմակերպել հայոց լեզուի դասընթացներ եւ այլ միջոցառումներ: Այդ հարցում ձեզ աջակցութիւն ցուցաբերում են Մտամպուլի հայկական կազմակերպութիւնները:

Հաւանաբար նորից կը կազմակերպենք: Ցանկանում ենք իմանալ մեր լեզուն, մեր մշակոյթը, մեր ամէն ինչը: Այս հարցը երկու հարթութիւն ունի՝ մէկը ֆինանսական է, դասընթաց կազմակերպելը նիւթականի հետ է կապուած: Սակայն ամենադժուարը ուսուցիչ գտնելն է. մէկը, որ կը կարողանայ բնակուել Դիարբեքիրում կամ յաճախակի ճամբորդել: Սա դժուար լուծելի հարց է: Այս առումով բարդութիւններ կան: Մտամպուլում ծնուած եւ մեծացած մի ուսուցչի այստեղ բերելը դժուար է: Մտամպուլի հայկական դպրոցների վիճակն արդէն յայտնի է եւ շատ քիչ թուով ուսուցիչներ կան: Սակայն դա չի նշանակում, որ մենք մեր մտադրութիւնից յետ կը կանգնենք: Անպայման կը փորձենք վերսկսել դասընթացը:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Masis Weekly
 Enclosed a check for (one year)

* \$50,00 * \$100,00 (first class) for USA
 \$ 125,00 (Air Mail) for Canada.
 \$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----
 Address: -----
 City: ----- State: ----- Zip Code: -----
 Country: -----
 Tel: ----- Email: -----

«ՄԱՆՉԵՍՏԵՐ ԵՈՒՆԱՅԹԸ»-Ն ԱՌԱՆՑ ՄԽԻԹԱՐԵԱՆԻ ԶԿԱՐՈՂԱՑԱԲ ՅԱՂԹԵԼ «ԱՐՍԵՆԱԼ»-ԻՆ

Ֆուտպոլի Անգլիայի առաջնութեան 12-րդ տուրի շրջանակներում «Մանչեստեր Եունայթեդ»-ը հիւրընկալելով «Արսենալ»-ին չկարողացաւ յաղթել (1:1):



Մանչեստեր քաղաքի «Օլդ Տրաֆորդ» մարզադաշտում կայացած խաղում «կարմիր սատանաների» կազմում միակ գնդակը խփեց իտալացի Մատան հանդիպման 68-րդ րոպէին: Խաղաւարտին հաշուի հաւասարութիւնը վերականգնեց Օլիվեր ժիրոնը՝ 89-րդ րոպէ:

Հայաստանի ազգային թիմի անդամ Հենրիխ Մխիթարեանն արդէն քանիերորդ անգամ ընդգրկուած է «Եունայթեդ»-ի յայտացուցակում:

ԱՆԳԼԻԱՅԻ ՊՐԵՄՅԵՐ ԼԻԳԱՆ ՈՒՆԻ ՆՈՐ ԱՌԱՋԱՏԱՐ

Ֆուտպոլի Անգլիայի առաջնութեան 12-րդ տուրի վերջին խաղում Լոնտոնի «Չելսին» հիւրընկալուեց «Միդլսբրոյին»: Խաղացի Անտոնիօ Կոնտէի գլխավորած թիմը յաղթեց Սպանիայի հաւաքականի յարձակուող Դիեգո Կոստայի միակ կոլի շնորհիւ՝ 1:0:

«Չելսին» վաստակեց 28 միաւոր եւ գլխավորեց Պրեմիեր լիգայի մրցաշարային աղիւսակը: 27-ական միաւոր ունեն «Լիւերպոլն» ու «Մանչեսթեր Սիթին», 25 միաւոր՝ «Արսենալը», 24 միաւոր՝ «Տոտենհեմը»:

Դիեգո Կոստան 10 կոլով գլխավորում է ընթացիկ առաջնութեան ռմբարկուների մրցավազքը:

ԿՐԵՅԳ ԲԵՐԼԻ. «ՄԽԻԹԱՐԵԱՆԸ ԿԱՐՈՂ Է ԻՐԵՆ ՅԻԱՆԱԼԻ ԴՐՍԵՒՈՐԵԼ 10 ՅԱՄԱՐԻ ԴԻՐՔՈՒՄ»

Շոտլանդիայի հաւաքականի, «Սելթիկի» ու Լոնտոնի «Չելսիի» նախկին ֆուտպոլիստ Կրեյգ Բերլին «Մանչեսթեր Եունայթեդ» կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանին տեսնում է ենթադրաբար ղեկավարողի դիրքում:



«Կարող եմ պնդել, որ եթէ Մխիթարեանը հնարաւորութիւն ստանայ խաղալ 10 համարի դիրքում, հիանալի կը դրսեւորի իրեն: Որքան էլ տարօրինակ է, մենք նրան դեռ չենք տեսնում մեկնարկային կազմում ու նոյնիսկ թիմի յայտացուցակում», - Բերլիի խօսքը մէջբերում է ESPN-ը:

Յիշեցնենք, որ Անգլիայի ընթացիկ առաջնութիւնում Հայաստանի հաւաքականի 27-ամեայ կիսապաշտպանը մասնակցել է 4 խաղի՝ մեկնարկային կազմում հանդէս գալով միայն մէկ անգամ:

ՍԹԻՎԸՆ ՁԵՐԱՐԴԸ ՈՐՈՇԵԼ Է ԴԵՌ ԶԱՒԱՐՏԵԼ ՖՈՒՏՊՈԼԻՍՏԻ ԿԱՐԻԵՐԱԸ

Անգլիայի հաւաքականի եւ «Լիւերպոլի» նախկին կիսապաշտպան Սթիվըն Ձերարդը որոշել է առաջիկայում չզբաղուել մարզչական գործունէութեամբ եւ շարունակել ֆուտպոլիստի կարիերան: 36-ամեայ ֆուտպոլիստը Դեկտեմբերին կը հեռանայ ամերիկեան «Լոս Անճելոս Գեյաքսից» եւ ձմեռային տրանսֆերային պատահանի ժամանակ կ'ունենայ ազատ գործակալի կարգավիճակ: Նա հրաժարուել է Անգլիայի Առաջին լիգայում հանդէս եկող «ՄԲ Դոնսի» առաջարկից՝ զբաղեցնել թիմի գլխավոր մարզչի թափուր պաշտօնը:



Սթիվըն Ձերարդը ֆուտպոլիստի կարիերան շարունակելու մի քանի տարբերակ ունի: Նրա ծառայութիւններով հետաքրքրուած է Միլանի «Ինտերը»: Ձերարդին շաբաթական 200 հազար ֆունտ ստերլինգ աշխատավարձով առաջարկ է արել չինական ակումբներից մէկը: Նաեւ չի բացառուում, որ մրցաշրջանի երկրորդ հատուածը Ձերարդը կ'անցկացնի հարազատ «Լիվերպոլում»:

ԶԻԴԱՆ. ՌՈՆԱԼԴՈՒՆ ԱՊԱՑՈՒՅՑԵՑ, ՈՐ ԻՆՔՆ Է ԱՐԺԱՆԻ «ՈՍԿԷ ԳՆԴԱԿԻՆ»

Մադրիդի «Ռեալի» ֆրանսացի գլխավոր մարզիչ Զինեդին Զիդանը Մադրիդի «Աթլետիկոյի» նկատմամբ յաղթանակից եւ Կրիշտիանու Ռոնալդուի հետ-տրիկից յետոյ վստահ է, որ «Ոսկէ գնդակը» պէտք է ստանայ պորտուգալացի յարձակուողը:



«Բարձրակարգ խաղ ցուցադրեցինք շատ բարձր մրցակցի հետ դիմակայութիւնում: «Վիսենտէ Կալդերոնում» յաղթելը ծանր է, բայց մենք աւելի ուժեղ էինք: Հազուադէպ էինք գնդակ կորցնում, գործում էինք շատ ինտենսիւ: Երբեք չեմ կասկածել Ռոնալդուի հնարաւորութիւններին: Նա աշխարհի լաւագոյն խաղացողն է: Այս խաղով նա փակեց «Ոսկէ գնդակի» ինտրիգի մասին քննարկումները», - Զիդանի խօսքը մէջբերում է Marca-ն:

Յիշեցնենք, որ Սպանիայի առաջնութեան 12-րդ տուրում «Ռեալը» մադրիդեան դերբիում 3:0 հաշուով արտագնայ յաղթանակ է տարել: Զիդանի գլխավորած թիմը հաւաքեց 30 միաւոր եւ արդէն 4 միաւոր է գերազանցում երկրորդ տեղում գտնուող «Բարսելոնային», որն այս տուրում գոլազուրկ ոչ ոքի էր խաղացել «Մալագայի» հետ: «Աթլետիկոն» 21 միաւորով 5-րդ տեղում է:

ՅԱՅԱՍԱՆԻ 4 ԲՈՆՑՔԱՄԱՐՏԻԿՆԵՐ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ ՊԱՅՔԱՐԸ

Սանկտ Պետերբուրգում ընթացող բուսօգնաբարտի աշխարհի երիտասարդների առաջնութիւնում Հայաստանը ներկայացնող մարզիկներից ռինգ դուրս եկաւ 60 կգ քաշային Նարեկ Յովհաննիսեանը եւ տարաւ երկրորդ յաղթանակն այս մրցաշարում: Յովհաննիսեանը 3:0 հաշուով առաւելութեան հասաւ աւստրիացի Սիբուրն Բալէյի նկատմամբ եւ դուրս եկաւ 1/8 եզրափակիչ, հաղորդում է ՀԲՖ-ի մամուլի ծառայութիւնը:

Հայաստանի մարզիկներից պայքարը շարունակում են նաեւ 49 կգ քաշային Արսէն Աբգարեանը, 52 կգ քաշային Ժիրայր Սարգսեանը եւ գերծանր քաշային Գուրգէն Յովհաննիսեանը:

ՅԱՅԿԱԿԱՆ ԱԿՈՒՄԲՆ՝ ԱՇԽԱՐՀԻ ԹԻՄԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆՈՒՄ

Ուկրաինայի իտալացի քաղաքի «Լոկոմոտիվ» մարզահամալիրում Նոյեմբերի 28-ից Դեկտեմբերի 2-ն անցկացուելու է ազատ ոճի ըմբշամարտի աշխարհի թիմային երրորդ առաջնութիւնը:

Երկրորդ տարին անընդմէջ առաջնութիւնում Հայաստանը կը ներկայցնի «Տաշիր» ակումբը, որի կազմում հանդէս կ'զբաղեն Նարեկ Խաչատրեանը (57 կգ), Գարիկ Բարսեղեանը (61 կգ), Նարեկ Սիրունեանը (65 կգ), Վալտեր Մարգարեանը (70 կգ), Սուրէն Խաչատրեանը (74 կգ), Վահէ Թամարազեանը (86 կգ) Շամիր Աթեանը (97 կգ) եւ Անդրանիկ Գալստեանը (125 կգ):

Առաջնութեանն իրենց մասնակցութիւնը հաստատել են նաեւ ԱՄՆ-ի, Թուրքիայի, Հունգարիայի, Մոնղոլիայի, Սիերա Լեոնեի, Իրանի եւ Ուկրաինայի ակումբները, փոխանցում են Հայաստանի ըմբշամարտի ֆեդերացիայից:

Ս.Դ. Յնչակեան Կուսակցութեան Հանդիպումը

Շարունակուած էջ 1-էն

պահպանել մեր պայքանական հողերու անվտանգութիւնն ու ազատութիւնը: Ան միաժամանակ նշեց նաեւ շրջանի դիմագրաւած մարտահրաւէրներն ու շեշտեց որոշ կառուցներու համար ըլլալիք օժանդակութեանց անհրաժեշտութիւնը: Ա. Աղաբէկեան գոհունակութեամբ անդրադարձաւ նաեւ Ֆրանսայի եւ Հայաստանի Հնչակեան կուսակցութեան պատասխանատուներու կողմէ ապրիլեան քառօրեայ պատերազմի վաղորդային ցուցաբերուած արագ եւ կենսական օժանդակութեանց մասին:

ողջունել է ետք փոխ վարչապետի բարենպաստակ ներկայութիւնն այս գաղութէն ներս, անդրադարձաւ Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական վարչութեան պատուիրակութեան վերջերս Արցախ կատարած այցելութեան մասին: Անոնք շահեկան հանդիպումներ ունեցած էին Արցախի Հանրապետութեան նախագահին ու առողջապահութեան նախարարին հետ եւ միասնաբար մշակած էին յետագայ օժանդակութեանց ծրագիրները: Արդարեւ Ս.Դ.Հ.Կ. անվերապահօրէն կը գորակցի Արցախի պետականութեան ու ժողովուրդին:

Ս.Դ.Հ.Կ. Արեւմտեան Ամերիկայի վարիչ Մարմնի փոխ ատենապետ ընկ. Գաբրիէլ Մոլոյեան

Աւարտին Պրն. Արթուր Աղաբէկեան Ղարաբաղեան շարժումի 25-ամեակի յուշամետալով պատուեց Հնչակեան պատուիրակութիւնը:

Save Support Sustain logo with Syrian Armenian Relief Fund contact info: P.O. Box 1948, Glendale, CA 91209-1948, www.syrianarmenianrelieffund.org